

ԲԻԿԵՐՈՆԵՅԱՆ ՄԱՍԿՈՐԱՆ

ՄԱՐՏ ԵՐԱՆԻ ՄԱՐՏ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍ
ՎԵՐԱԿԱՆՈՒՄ, ԵՐԱՆԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍ

**Ն. Ս. Օ. Տ. Տ.
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՐՂԵՐԶԸ ՄԱՐՏԻ 8-Ի
ՎԱՆԱՅՆ ՏՈՒՆ ԸՈՒԹՈՒՄ**



Լուստ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրն նուրբումն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում սիրելի տիկնամյց եւ օրիորդաց մարտի 8-ի տոնական առիթով:

Գարնանային վերազարթոնքի այս օրերին մեծաբան ենք մեր մայրերին, քույրերին ու դուստրերին՝ իրենց ամբողջական առաքելության մեջ:

Արդարեւ, կամանց կոչմանց մեջ վեհագույնը մայրությունն է, որ խորհրդանշում է ընտանիքի: Ամփոխարինելի է կամանց դերը ընտանիքների ամրության, բրիտանական արժեքներով եւ հայրենյաց ավանդներով մեր զավակներին կրթելու գործում՝ լինելով ու մնալով սիրո ու բնության, հավատարմության ու անձնության միջոցով խառնուրդ մեր կյանքում: Հավասար հնարավորությունների մեր դարում անուրանալի են ման կամանց դերն ու բերածն ավանդ գիտության, կրթության, տնտեսության եւ հասարակական կյանքի մյուս բոլոր բնագավառներում՝ նպաստելով մեր հասարակության բարօրությանն ու զարգացմանը:

Սիրելի՛ մայրեր, քույրեր ու դուստրեր, Մեր մայրամբն է, որ երկնավոր Տիրոջ խնամքի ներքո հարստացնեք մեր կյանքը՝ լցնելով այն ձեր բարի գործերով, սիրով, հոգատարությամբ ու առաքինի օրինակով, քանզի սուրբ թաղին խաղի համաձայն՝ «Առաքինի կինը բանկ է թողո՞ղ գոհարներից»:

Թող Ամենակալը Աստված շնորհազարդի ձեզ հոգեւոր առաքինություններով եւ պարգևի ընտանեկան խաղաղ ու ապահով կյանք, անմկազ եղբայրներ ու անսպառ որդիություն՝ ձեր ընտանիքների, զավակների ու սիրելիների հետ:

«Շնորհք, սեր եւ խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղև» զին ընդ ձեզ, ընդ ամենեանս. Ամեն»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՃԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

6 մարտի

ՀՀ-ում Սյուլակիայի նորանշանակ դեսպանին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շարագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Պետրոս Պրիպուտենին (ստամբուլյո՝ Մոսկվա):

Շնորհավորելով դեսպանին՝ Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ վերջինս գործունեության շնորհիվ երկու երկրների հարաբերությունները եւ գործակցությունն ավելիով կզարգանան եւ կարգավորվեն: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ փաստեց նաեւ երկու ժո-

ղովուրդների՝ քրիստոնեական ընդհանուր արժեքների վրա խարսխված բարեկամական ամուր կապերի մասին՝ նշելով, որ դրանց զորացման մեջ մեծ դերակատարություն ունի Սյուլակիայի հայկական համայնքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող մշտական հոգածության համար իր շնորհակալությունը հայտնեց երկրի իշխանություններին, գնահատանքով ընդգծեց նաեւ այն զորակցությունը, որ Կաթողիկոս եկեղեցու կողմից բերվում է Հայոց եկեղեցուն՝ Սյուլակիայում հայրօրիների հոգեւոր կյանքի կազմակերպման գործում:

Սյուլակիայի նորանշանակ դեսպանը նույնպես ուրախություն հայտնեց հանդիպման կապակցությամբ՝ վստահեցնելով, որ իր ղեկավարության գործունեության շրջանակներում պիտի նպաստի տարբեր ոլորտներում հայ-սյուլակական կապերի ամրապնդմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀՀ-ում Սյուլակիայի դեսպանն անդրադարձան նաեւ երկու երկրների առջեւ ծառացած մարտահրավերներին ու խնդիրներին, ինչպես նաեւ՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Դովհանիսյանը:

9 մարտի

Վրաստանի կրոնի հարցերով դեսպան գործակալության նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի կրոնի հարցերով դեսպանական գործակալության նախագահ Չազա Վաշակմանին գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասատրյանի: Հանդիպմանը ներկա էր Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանը:

Ողջունելով իյուրերին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գոհունակությունը հայտնեց Վրաստանում կրոնի հարցերով պետական գործակալության ստեղծման կապակցությամբ:

Նորին Սրբությունն ու տիար 2. Վաշակմանին մասնավոր անդրադարձ կատարեցին Վիրահայոց թեմին եւ Վրաց Ուղղափառ եկեղեցուն հուզող հարցերին ու խնդիրներին: Վեհափառ Հայրապետը ողջունեց Վիրահայոց թեմի հետ ձեւավորված գործակցությունը՝ հույս հայտնելով, որ նորաստեղծ գործակալության եւ եկեղեցական կառույցների համատեղ աշխատանքի շնորհիվ բարվոք լուծում կունենան առկա բոլոր խնդիրները՝ երկու ժողովուրդների

դարավոր բարեկամության ոգուն համահունչ: Խոսվեց նաեւ Վրաստանում վերջին տասնամյակների փոլոված հայկական եկեղեցիների վերականգնման ուղղությամբ պատկան կառույցների ձեռնարկած

աշխատանքների ընթացքի, ինչպես նաեւ հայ համայնքի հոգեւոր կարիքների բավարարման համար Վիրահայոց թեմին անհրաժեշտ հայոց պատմական սրբավայրերի վերադարձման հարցի մասին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ողջույնն ու բարեմաղթանքները փոխանցեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին:





Մարտի 7-ին, Խարկով քաղաք (Ուկրաինա) կատարելից այցի ընթացքում, հյուրանոցում հանկարծամահ էր եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գրիգորիս արք. Բունիարթյանը։

Սրբազան հոր վախճանը մեծ կորուստ է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և նրա հավատավոր զավակների համար։

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շարադույն Պատրիարքը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը

հայկական համայնքի հոգեւոր իւրավոր։ 1971 թ. մեկնել է Ֆրանսիա՝ ուսումը շարունակելու Լիոնի Կաթոլիկ համալսարանում՝ միաժամանակ ծառայելով տեղի հայկական եկեղեցում։

1973-1975 թթ. ծառայել է խորհրդային բանակում՝ Ուկրաինայում։ 1975 թ. ստացել է մասնավոր վարդապետության աստիճան։ 1975-1979 թթ. ուսումը շարունակել է Փարիզի Կաթոլիկ համալսարանում՝ իրավա-



ն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը խորապես ցավում և սգում են բարեհիշատակ Գրիգորիս սրբազանի վախճանը։

Գրիգորիս արք. Բունիարթյանը (ավագանի անունը՝ Գրիգոր) ծնվել է 1946 թ. Էջմիածնում։ 1960 թ. ընդունվել է Գեորգյան հոգեւոր ճեմարան։ 1965 թ. ձեռնադրվել է սարկավագ։ 1966 թ. ավարտել է ճեմարանը, 1966-1967 թթ. շարունակել է ուսումը Չազգուսկում՝ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայում։ 1967-1968 թթ. աշխատել է Հայ եկեղեցու պաշտոնական «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում։ 1969 թ. ծառայության է կոչվել Օդեսիայի Ե. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում։ Նույն թվականին ձեռնադրվել է աբեղա և նշանակվել Դոնի Ռոստով քաղաքի

կան ծառայություն մատուցելով Փարիզի Ս. Զովի. Սլոտիչ առաջնորդանիստ եկեղեցում։ 1979-1980 թթ. եղել է Էջմիածնի հոգեւոր ճեմարանի տեսուչ։ 1981 թ. նշանակվել է Բուենոս Այրեսի առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր իւրավոր, իսկ 1982 թ. ընտրվել է Հայ Առաքելական եկեղեցու Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ։ 1983 թ. ստացել է եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում։ 1990 թ. նշանակվել է Շիրակի թեմի առաջնորդ։ 1992 թ. Գյումրի քաղաքում հիմնադրել է Շիրակի հոգեւոր ընծայարանը։ 1992 թ. ստացել է արքեպիսկոպոսական կոչում։ 1998-1999 թթ. Գրիգորիս սրբազանը ժամանակավորապես կատարել է Սյուրվիկայի Հայ Առաքելական Ե-

Ի Տեր հանգալ Գրիգորիս արք. Բունիարթյանը

կեղեցու գործունեության համակարգողի պարտականությունները։

1999-2001 թթ. եղել է Հայ եկեղեցու Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդ։

2001 թ. Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդն էր։

Մարտի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատանը տեղի ունեցավ Գրիգորիս արք. Բունիարթյանի հուղարկավորության արարողությունը։

Գրիգորիս սրբազանի աճյունը նախ դրվեց Ս. Գայանե վանքում, ուր եւ կատարվեց եկեղեցու կարգը՝ նախագահությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շարադույն Պատրիարքը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի։ Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետն իր ցավակցական խոսքն ուղղեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ողջ միաբանությանը, հանգուցյալ սրբազանի հարազատներին ու մտերիմներին և ներկա հավատավոր ժողովրդին։

«Մենք համախմբվել ենք այստեղ վերջին անգամ մեր սերը, հարգանքն ու արդթը բերելու իրեն և ուղեկցելու դեպի երկնային լուսնեքն բարձունքներ ու օթեաններ», - ասաց Նորին Սրբությունը։

թյան իր նախանձախնդրության մեջ։ Նա հովվական և առաջնորդական իր կյանքն ապրեց երջանկության մեջ, քանի որ գիտեր, որ իր ազգին և եկեղեցուն ծառայելու ճշմարիտ ուղի է ընտրել ու ամբողջովին նվիրվեց այդ ծառայությանը։ Ծառայեց ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում՝ ամեն տեղ արժանանալով իր հավատացյալների սիրուն և հարգանքին։

...Մենք ցավ ենք ապրում կորստով մեր սիրելի սրբազանի։ Նա՝ որպես եկեղեցու սպասավոր և որպես Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ, դեռ անելիքներ ուներ։ Ուկրաինայում իրականացվելիք ծրագրեր էր ձեռնարկել, նախաձեռնել էր Կիև քաղաքում եկեղեցու կառուցում և խառնազգայն կերպով ապրում էր այդ ծրագրով։ Անողնաբեկ ջանքեր էր ի գործ դնում, որպեսզի շենական ու պաշտաման Ուկրաինայի հայոց թեմը։ Երկրի համար դժվարին ժամանակներում անգամ չէր ամենալուրջ էր՝ իր համայնքներում ու ծուխերում՝ գոտեպնդելու իր հավատավոր ժողովրդին այս ծանր վիճակում։

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը մարդկային, որ հանգուցյալ սրբազանի հոգին երկնային օթեաններում շարունակի ցնծալ ու բերկրալ՝ տեսնելով իր հոգեւոր եղբայրների



Մասնավորապես անդրադառնալով բարեհիշատակ Գրիգորիս սրբազանի մարդկային եղբայրին և նվիրյալ ծառայությանը՝ Հայոց Նովկապետը նշեց. «Գրիգորիս սրբազանի ճանաչում ենք ուսանողական տարիներին։ ...Մարդասեր էր, ընկերասեր էր անմիջական՝ իր փոխհարաբերություններում։ Այդ տարիներին ճանաչեցիք նրան՝ որպես եկեղեցասեր, հայրենասեր, բարի հոգու տեր մի անձնավորության, իսկ հետագա տարիներին նա եկեղեցական ասպարեզում այդ բոլոր աստվածաշնչորդի հատկանիշները լավագույնս դրսևորեց՝ շահելով մարդկանց սրտերն ու հոգիները, վայելելով հարգանքը հավատավոր մեր զավակների։ Գրիգորիս սրբազանն օրինակելի էր Էջմիածնասիրու-

ծառայագործության նվիրական առաքելության մեջ արձանագրվող ձեռքբերումները։ Այնուհետև սգո թափորը շարվեց դեպի Մայր Աթոռի միաբանական գերեզմանատուն, ուր նախագահությամբ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապարիսի՝ կատարվեց հանգուցյալ սրբազանի թաղման կարգը։

Հուղարկավորությանը մասնակցում էին Հայ Առաքելական եկեղեցու թեմակալ առաջնորդներ և Մայր Աթոռի միաբաններ, Շիրակի և Արմավիրի մարզային ու քաղաքային իշխանությունների, ՀՀ-ում Ուկրաինայի դեսպանատնի ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ, Ուկրաինայի հայոց թեմի համայնքների պատասխանատուներ։

«Յիշատակն արդարոյն օրինութեանն էլիցի»։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՉԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

13 մարտի

ՀՀ-ում Լեհաստանի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Եփր Լովակովսկուն։ Հանդիմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Ղուկասիսյանը։

Ողջունելով դեսպանի անդրանիկ այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները բերեց վերջինիս նշանակման առիթով։ Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ տիրաւ յօի Լովակովսկուն դիվանագիտական գործունեությունը նոր խթան կհանդիսանա հայ-լեհական հարաբերությունների զարգացման համար։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Լեհաստանի դեսպանն անդրադարձան հայ ու լեհ

ժողովուրդների պատմական կապերին, երկու երկրների միջե տարբեր ոլորտներում առկա սերտ գործակցությանը։

Վեհափառ Հայրապետը գնահատանքով նշեց այն աշակցությունը, որ բարեկամ երկրները, որոնք թվում են Լեհաստանը, ցուցաբերել են Հայաստանին՝ երկրի առջե ծառացած մարտահրավերների հաղթահարման ճանապարհին։ Խոսելով Լեհաստանի հայ համայնքի մասին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց այն զորակցությունը, որ Լեհաստանի Կաթողիկ եկեղեցին ցուցաբերում է Հայ եկեղեցուն՝ հայ համայնքի հոգեւոր կյանքի կազմակերպման նպատակով։ Իր հերթին Լեհաստանի դեսպանը հանդիպման համար շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ մասնավորապես շեշտելով Հայ և Կաթողիկ եկեղեցիների ունե-



ցած կարեւոր դերակատարությունը երկու երկրների ու ժողովուրդների կյանքում։ Դեսպանը վստահեցեց նաեւ, որ պետք է ըստ ամենայնի նպատակն հայ-լեհական հարաբերությունների առաջվա ամրապնդմանն ու զարգացմանը։ Զև-

նարկվեց նաեւ Հայոց Տեառնապետության 100-րդ տարեկից առիթով Մայր Աթոռում կազմակերպվելիք արարողական արարողությանը և ոգեկոչման միջոցառումների Լեհաստանի ներկայացուցիչների մասնակցության հարցը։

Մարտի 13-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Քարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսավոր արարողություն: Կրթության եւ մշակույթի ոլորտում հայրենիքին եւ ժողովրդին մատուցած ծառայությունների համար Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվով բարձր շքանշաններ հանձնվեցին 33 արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Վլադիմիր Բալյանին, Սիմեոն Հայրույանին, Կոմիտասի

Շքանշանների հանձնման արարողություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

տեսուչ, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան Եսայ Ժամկոչյանը:

«Հարգարժան պրն. Հայրույան, Հայրապետիս համար գոհունակություն է անորադառնալ Ձեր հայրենակներ եւ ազգաշեն գործունեությանը, որին ականատես եմք եղել Մենք՝ անձնապես ճանաչելով

րավության կենտրոնի տնօրեն Վարդան Եսայ Նավասարդյանն ընթերցեց Երուսաղ թաղետոյանին ուղղված կոնդակը, որում մասնավորապես նշված է. «Մեծարգո պրն. Թադեոսյան, Ձեր բարձր արվեստի միջոցով Ղուբ կյանքի ողջ ընթացքում ծառայում եք հայրենի մեր երկրին եւ հավատավոր ժողովրդին: Ձեր երկարամյա բեղուն գործունեությունը եւ հարուստ վաստակը արժանապես դասել է Ձեր անունը հայ երաժշտարվեստի հայտնի անունների կողքին:

Մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալով Երեւանում եւ Մոսկվայում՝ Ղուբ առիթ ունեցաւ աշակերտելու ժամանակի մեծանուն ջութակահարների: Տակավիկ երիտասարդ տարիքում հրավիրվեցի ելույթներ ունենալու Կոմիտասի անվան պետական լարային քառյակում՝ կարճ ժամանակ անց ստանձնելով քառյակի ղեկավարի պատասխանատու պաշտոնը: Հարունակելով նվագախմբի լավագույն ավանդները՝ Ղուբ նոր հաջողությունների առաջնորդեցի Կոմիտասի անվան պետական լարային քառյակը, որը բարձրարվեստ մատուցմամբ հայրենական եւ միջազգային բազմաթիվ բեմերից ունկնդիրներին ներկայացնում է հայ եւ համաշխարհային երաժշտարվեստի գոհարները՝ արժանանալով բազում մրցանակների:

Արդյունաշատ է նաեւ Ձեր մանկավարժական երկարամյա գործունեությունը: Տարիների Ձեր փորձն ու կարողություններ

Թովմաս Պողոսյանին շնորհված հայրապետական կոնդակն ընթերցեց Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Բագրատ Եսայ Գալստյանյանը:

«Սիրելի պրն. Պողոսյան, մեր ժողովրդին բաշտածունք է Ձեր անունը՝ որպես բանահավաքի, տաղանդավոր երգչի ու մանկավարժի, ով անձնվիրաբար ծառայում է հայ աշուղական արվեստի պահպանության, ուսումնասիրության ու զարգացման նվիրական գործին: Տասնամյակներ շարունակ Ղուբ անվազ հետեւողությամբ պետում եք մեր ազգային երգարվեստի ակունքները, ժամանակի մոռացությունից վեր հանում շատ ու շատ երգեր ու աշխարհի տարբեր բեմահարթակներից մատուցում հայ եւ օտար ունկնդիրներին: Այսօր կարելի է հաստատել, որ մեր ժողովրդը աշուղական երգերի հարուստ ժառանգության բազմաթիվ գոհարներ ճանաչում է Ձեր՝ հոգուց բխող կատարումներով, որոնք Ձեզ բերել են պետական բազում մրցանակներ, կոչումներ ու պարգևներ, նաեւ անկեղծ սերը երաժշտասեր հայրողյալ:

Գովարժան է նաեւ, որ արժանավոր սերունդ դաստիարակելու ազնիվ նախանձախնդրությամբ՝ Ղուբ իրականացնում եք նաեւ մանկավարժական երկարամյա գործունեություն՝ Ձեր հարուստ փորձառությունն ու գիտելիքները սիրով փոխանցելով երգարվեստի ասպարեզում առաջին ջայլերը կատարող Ձեր սաներին:

Սիրելի պրն. Պողոսյան, մեզ համար առանձնակի գոհունակություն է անդրադառնալ, որ պատանի հասակում ուսանելով Մայր Աթոռի հոգեւոր ճեմարանում, Ղուբ կյանքի ողջ ընթացքին անխախտ պահեցիք Ձեր հոգու անկեղծ սերն ու նվիրումը հանդէպ Առաքելական մեր Սբ Եկեղեցին եւ Սբ Էջմիածնը: Ձեր աստվածատուր շնորհներն ու կարողությունները նաեւ ի սպաս բերեցիք եկեղեցական արարողությունների կատարմանը՝ երգելով մեր եկեղեցիների երգչախմբերում», - ասված է հայրապետական կոնդակում:

Կոնդակների հրապարակումից հետո Քարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծարյալներին հանձնեց Հայ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշանները:

Այնուհետեւ իրենց սրտի խոսքն ասացին նաեւ Հայ Եկեղեցու շքանշանակիրները՝ երախտագիտություն հայտնելով կրթության եւ մշակույթի մշակների նկատմամբ Հայոց Եկեղեցու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից մշտապես դրսեւորվող ու

անվան լարային քառյակի գեղարվեստական ղեկավար Երուսաղ թաղետոյանին եւ 33 ժողովրդական արտիստ Թովմաս Պողոսյանին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի դիվանապետ Արշակ Եսայ Խաչատրյանը:

Մեծարյալների վաստակի եւ գործունեության մասին իրենց մտորումները փոխանցեցին Դոնարա Հարությունյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, Նոնա Ոսկանյանը եւ 33 մշակույթի վաստակավոր գործիչ Հովհի Հովհաննիսյանը, որից հետո «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեցին հայրապետական սրբատառ կոնդակները:

Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եսայ Բաբայանն ընթերցեց Վլադիմիր Բալյանին ուղղված հայրապետական կոնդակը, որում մասնավորապես նշված է.

«Մեծարգո պրն. Բալյան, մեր ժողովրդը ճանաչում է սիրում է Ձեզ՝ հայ մշակույթի անխնայ նվիրալից ու հավատարիմ ասպավորի: Ձեր բեղմնավոր կյանքի ընթացքին Ղուբ տարբեր հանձնառություններով ու պաշտոններով բարի ավանդ եք բերել հայրենի մեր երկրում երաժշտարվեստի տարածման ու զարգացման երախտարժան գործին՝ ղեկավարելով Հայֆիլհարմոնիան, Հայպետեստրադան եւ Հայաստանի ժողովրդական գործիքների պետական համույթը:

Արդյունաշատ է նաեւ Ձեր ստեղծագործական վաստակը: Ձեր հեղինակած բազմաթիվ երգերը, սիմֆոնիկ ու կամերային ստեղծագործությունները մշտապես հնչել են Հայաստանի եւ Սփյուռքի տարբեր բեմերից ու եթերներից՝ սիրով ընդունվելով երաժշտասեր հասարակայնության կողմից:

Ուրախ եմք նաեւ անդրադառնալ, որ երկար տարիներ մանկավարժական արդյունավոր գործունեությամբ կրթել ու արվեստի մեծ ասպարեզ եք առաջնորդել բազմաթիվ շնորհալի երիտասարդների՝ նրանց փոխանցելով Ձեր հարուստ փորձն ու գիտելիքները:

Սիմեոն Հայրույանին շնորհված սրբատառ կոնդակն ընթերցեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր



հավատավոր հայորդու: Այսօր ուրախ եմ հաստատելու, որ Ղուբ կյանքի ողջ ընթացքում գիտական ու մանկավարժական արդյունաշատ գործունեությամբ գովարժան ծառայություն եք մատուցել Հայրենի մեր երկրին ու հավատավոր ժողովրդին: Տակավիկ երիտասարդ հասակում Ղուբ նվիրվեցիք նոր սերնդի կրթության երախտարժան գործին: Տասնյակ տարիներ անսպառ նախանձախնդրությամբ դասախոսեցիք եւ վարչական պատասխանատու հանձնառություններ ստանձնեցիք Երեւանի պետական համալսարանում եւ Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտում, ապա վարեցիք մեր երկրի կրթության նախարարի պաշտոնը՝ գնահատարժան ավանդ բերելով ի նպաստ մեր երկրում կրթության բնագավառի զարգացման:

Գովարժան է նաեւ Ձեր գիտական ու ստեղծագործական վաստակը: Ձեր բեղուն գրչին են պատկանում հարյուրից ավելի գիտական ուսումնասիրություններ, դասագրքեր ու գեղարվեստական աշխատություններ, որոնք արժանի ընդունելության են արժանացել մեր ժողովրդի կողմից», - ասված է հայրապետական կոնդակում:

Մայր Աթոռի քրիստոնեական դաստիա-



րը սիրով ի սպաս եք բերում Երեւանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայի առաքելության արդյունավորմանը, որպեսզի հաստատությունը արդյունավորությամբ շարունակի երաժշտների նոր սերունդի պատրաստության առաջին գործը:

շարժությունն ու բարձր գնահատանքի համար:

Ցերեկային ընթացքում կատարումներով հանդես եկան 33 ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթեոսյանը եւ Սայաթ-Նովայի անվան հայկական գուսանական երգի անսամբլը:

Սկիզբը՝ 2014 թ. թիվ 13-17, 20-24, 2015 թ. թիվ 1-4

Զմուռնասան, որ հայրենասիրական գրականությունը 1960-ականներից սկսած ձեռք բերեց նաեւ «ամետուրային» գրականության համբավ, ստեղծեց գանգ-վածային պահանջարկի գրականություն: Այս կապակցությամբ Ալբերտ Կոստանյանը գրում է. «Գրական առաջընթացի մի այլ թել պետք է դիտել այն արտադրանքը, որ կոչված է բավարարելու մասսայական ընթերցողի սպառողական պահանջը. դա արվում է եւ հաստատիր պատմական պետքով, եւ ժամանակակից կյանքից բխող սպեկուլյատիվ թեմաների արծարծումով» (Ա. Կոստանյան, «Հայ արձակի ճգնաժամ»-ը...», ԳԶ, 1970, թիվ 10): Ըստ այս եւ համանման դիտարկումների՝ ստեղծվում է «արհեստավորական արձակ» իր «հոծ ներկայացուցչներով»: Դժբախտաբար այս «արհեստավորական» աստիճանաբար դարձավ գերիշխող, թելադրող, որոշող, եւ Գորոնների միությունն ստեղծագործական վիճակից փրկեց իրենց արհեստավորների համբարությունը:

Այս պայմաններում, իհարկե, շարունակում են գործել առողջ ուժերը: Այս տեղադրությունը ավելորդ չէ նաեւ պատմագիտական, հայագիտական տարաբնույթ գրքերի հրատարակումները, որոնցից արժե անշունչանցել «Հայկական սովետական հանրագիտարանը», հայկական հեղինակների բազմա-հատորյալը, Արամ Դանալանյանի կազմած «Ավանդապատումը» (1969), Ջոն Ավրակոսյանի եւ Մկրտիչ Ներսիսյանի՝ Եղեռնի նկիրված աշխատությունները, հայ ժողովրդի պատմության, հայ գրականության հին եւ միջնադարյան, նոր ու նորագույն շրջանների պատմության հատորները, առանձին գրողների ու հայագետների երկերի ժողովածուները:

Հայաստանի ոգին թափանցում է արվեստի այլ ոլորտների՝ գրվում են երաժշտական նոր ստեղծագործություններ, բացվում են նոր ցուցադրություններ, քաղաքներում կանգնեցվում են ազգային հերոսների հուշարձանները, դրվում են ազգային գրողների ու գործիչների արձաններն ու կիսանդրիները:

ՀԱՅՐԵՆԱԴԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ XX ԴԱՐ



Հայրենասպառումի հայկական դոսեերումներն արժանանում են համամիութենական ճանաչման: Գորոններից առանձնանում են Համո Սահյանն ու Հրանտ Մաթեոսյանը: Այս առումով հիշարժան են Ալվա Մարչենկոյի («Լեռներս գնում մտնում են երկինք...», ԳԶ, 1970, թիվ 42, «Լիտերատուրնայա գազետա», 1970, թիվ 39-ից թարգմանություն) եւ Լեւ Օզերովի («Նամակ Համո Սահյանին», ԳԶ, 1971, թիվ 40) դիտարկումները՝ Սահյանի մասին եւ Գ. Տրեֆիլովայի («Դոկիլայի փոխարեն», ԳԶ, 1966, թիվ 23, «Նովի միր», 1966, թիվ 3-ից թարգմանություն) ու Անդրեյ Բիտովի («Հովվերգություն. XX դար», ԳԶ, 1967, թիվ 27, «Լիտերատուրնայա գազետա», 1967, թիվ 26, 28 հունիսի, թարգմանություն) հոդվածները՝ Հրանտ Մաթեոսյանի մասին: Ավելորդ չէ նշել նաեւ Հրազդի չպետք է գրել. դրանից հին հուտ է գալիս: Եվ՝ կամ՝ չգրեցին, կամ՝ շատ ավելի ուշ մի քանի մարդմունք բաներ գրեցին: Զգիտե՛ք ինչու «փողոցում, ծառերից կախված օրորվել» ավելի բանաստեղծական էր, քան բուն ծննդավայրն ու հայրենիքը: Այս օտարացումը կամ սառնությունը գուցե կարելի է բացատրել նրանով, որ նախորդները՝ Հիրազ, Սահյան, Սեւակ, Դավթյան, հայրենասիրական քնարերգությունը հասցրել էին զագաթնակետին:

Սակայն նույն այս շրջանում ավելի գործունե են դառնում արձակագիրները, որոնց համար առաջնային էր ժառանգականությունը, հայրենիքի հիշողությունը, կարոտի մորմոքը...

«Գարուն» ամսագիրը 1967 թ. 8-9-րդ միացյալ համարում հարցաթերթիկի պատասխաններ է հրապարակում, որոնցից 5-րդն ունի այսպիսի ձեւակերպում. «Ազգային գրող եւ ազգային գրականություն» հարցի ձեռք մեկնաբանությունը: Այնքան պատասխանում է նաեւ Դ. Սեւակը. «Իսկական գրողը, թե՛ նույնիսկ կամենա էլ, չի կարող չլինել ազգային: Դա բացառական է: Բայց ազգային մեծ գրող է դառնում միայն նա, ով ողորմաբան հասկանում է, որ ինքը նաեւ մարդկության զավակն է, ոչ թե միայն որեւէ ազգի»:

Ֆրանսիական գրող Ալեք Ռոբ Գրինի արձարձում է Այն Բելաի, նոր մարդու հարցերը գրականության մեջ, այդ կապակցությամբ ներկայացնում իր հրովարտակը, ըստ որի՝ նոր Բելան իսպառ մերժում է անցյալի ավանդույթները:

Սա որպես ապահով է իր ազգային հարցերը գոնե արտաքուստ լուծած երկրի գրողի խոսք է, իսկ հայ գրողն ու ամբողջ գրականությունը այս եւ հետագա տասնամյակներին մի կողմից շարունակում էին նորոգել անցյալի ավանդույթները, փայփայել անցյալի հիշատակները, մյուս կողմից՝ վառ պահել իրական Հայաստանի ոգեղեն շահերը:

Եկավ 1988-ի զարթոնքի փետրվարը, հաջորդեցին արցախյան դեպքերը, 1991-ի սեպտեմբերի 21-ին հռչակվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: Այս տարիները լի են հայրենասիրության բացառիկ դրսեւորումներով՝ հանրահավաքներ, մահապարտներ, հերոսներ, սիրազոհ ծուլություններ, Արցախի ազատագրում, միաբնության կոչեր, Տեղապալտության միջազգային ճանաչման գործընթաց... Եկել է հայրենասիրության ազգված պալուն միայն նա, ով ողորմաբան հասկանում է, որ ինքը նաեւ մարդկության զավակն է, ոչ թե միայն որեւէ ազգի»:

ազգային սնապարծության, ապա հիմա արդեն ազգային արժանապատվությունը տրորվեց, այդ մասին խոսեց դարձավ ամուսնային, եւ հայ մարդը դադարեց կյանքի հեռանկարը կապել իր հայրենիքի հետ: Վրա հասավ ողբերգական անկումը:


Ժողովրդավարությունն ու ազատամտությունը հանգեցրին նաեւ ուղեղների անմաքուր լվացման: Եթե Ստալինի ժամանակ հայրենասիրությունը պիտակավորվում էր որպես անցյալից, հայրենասերը հռչակվում էր ժողովրդի թշնամի, դատապարտվում է զնդակահարության ու քսորի սպանակալիքով պատժվում, ապա հիմա արդեն դարձավ սակարկության կուլո՛ր՝ ի՛նչ հայրենիք, ի՛նչ հայրենասիրություն, դրանք իրենց դարձ արած հասկացություններն են եւ որպես այդպիսին՝ սահմանափակում են մարդու ազատությունը: Այսպես տեղական անցյալից դարձավ տեղական ղեկաշիջակալիք, ազգային ապագային կերպարանք ընդունեց, հայրենասիրությունը փոխվեց ապահայրենասիրություն: Համաշխարհայնացումը համաշխարհաբաղադրացու անցուղարձով մտել է մեր տուն ու քանդում է մեր հայրենիքը: 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարավերջին թուրքերն էին, հետո Ստալինն էր, հիմա արդեն «300-ի կոմիտե»-ն է: Բոլոր դեպքերում էլ նպատակները նույնն են՝ Հայաստանի հալածություն, որպեսզի ժողովուրդը չամրանա իր հողի վրա:

Անկախության շրջանը շատ ավելի խոր, բազմաշերտ ու հանգամանային խոսակցության կուլո՛ր է, ուստի թողնե՛ք առաջիկա հանդիմանը: Տեղապալտության 100-րդ տարեկից նախաշնչին մենք՝ Հայաստանի Հանրապետության բնակիչ հայերս, կանգնած ենք նոր փորձությունների ու մարտահրավերների դիմաց եւ պետք է շարունակենք տուրպ ու իմաստ կայել: Այս է մեր երկիրը, եւ այն է մեր հողը, ուր պիտի ապրենք, ուր պիտի պահենք, պահպանենք եւ փոխանցենք մեր ժառանգներին:

Դավիթ ԳՍՄԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Սկիզբը՝ թիվ 4

Առաջին՝ «Թուրք վասն խոստովանութեան վարուց յանցանության» ճառը մեղքերի խոստովանության ու զոջման կոչ է եւ պատկերավոր ներկայացնում է մաքրակենցաղ հավատալիս: «Որք Սուրբ Դոգույն են ցանկցողը, եւ աստուածային սիրոյն են բաղձեալը, գալստեանն Որդույն Աստուծոյ սպասեն, եւ անմահ փառաց փափագեն. միշտ ի վերինն խորինն, եւ համապաղ անդ որսախուրթինս փափագեն. գաւորեայս արհամարհեն ուրանան, եւ օր ըստ օր է վեր ելանեն՝ ոչ միայն հաւատոցն ճշմարտութեամբ, այլ եւ վարուցն առաջին նութեամբ...» («Յովհաննու Մանդակունւոյ ճառը», է Վեներտիկ, 1860, էջ 13): Ապա հեղինակը նկարագրում է մեղազգործին, որը խեղդվում է անցյալից զարշառու ճահճում. «Եւ արդ ո՛ր գիտ լացցէ, եւ կամ ո՛ր գիտ ողբացէ զվեռնայս մեղօք եւ վրդեանայս անթուրեմով, զանկալեւ անթուրեմով, զանկալիս ի խորս խաւարի եւ յանդուռս ամբարշտութեամբ. զի չարիք իմ չարարքն զիս, եւ պղծութիւնք իմ սպանանեն: Եւ արդ որպիսի՞ ինչ լացցի, եւ կամ որ-



պիսի՞՝ ողբացից գանթի մեղաց իմը զբազմութիւն, որ ի յանցանքս իմ եւ հիւանդացեալ, եւ ծուրութեամբ իմով ցուազնեալ...» (անդ, էջ 14):

Մաքրակենցաղ հավատալի հակադրելով մեղազգործին՝ հորդորվում է Աստուծոյ շնորհված ազատ կամքով ընտրել ճշմարտ, դեպի փրկություն տանող ճանապարհը եւ հասնել անսակեւտ նավահանգստի: Սակայն մարդը, իր բնությամբ սխալական լինելով, կամա թե ակամա, գիտակցաբար թե անգիտությամբ հետեւանալով ընկնում է մեղքերի որոգայթը, իսկ մեղքերի

ՆՈՎՃԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒՆ

արմատները կարելի է կտրել միայն անկեղծ զոջմամբ ու ապաշարությամբ. «Արմատը դեղոց թշկապ զցուս մարմնոյն առողջացնեն, եւ հոտուն արտադուց ապաշարութեան զվեղացն զվերս ողոցն թշկեն. եւ մանաւանդ որ հանդերձ ողորմութեամբ եւ թոյով տնակնաց ապաշարիցեն: Զանգի բազում արմատը են անտիցն որ դոյաւրեցուցանեն, որք հասն են ի դեղս թշկապ, քայց է որ առանել ան ազդոյ է առ ի ցաւոց փառաւունս: Նոյնպէս եւ ի դեղս տրոր բազում ճգնութիւնք ապաշխարութեան են ի մաքրումն մեղաց. քայց ողորմութեամբ է կարելոյն ազդոյ քան զամենայն առաջինութիւն առ ի զվերս քաւելոյ, զվերսն թշկելոյ հանդերձ ողբովք եւ հառաչանօք եւ գթագիլ արտաւտօք...» (անդ, էջ 21): Այսպիսով՝ ճանդերի հեղինակը խոստովանությունն եւ ապաշխարության ժամանակ կարեւորում է անկեղծ զոջումը, ողորմածությունն ու բարեգործությունը, առանց որոնց ապաշխարանքը

դառնում է ձեւական, անիմաստ: «Ենցերորդ՝ «Վասն պտղոց պատարագաց եւ ողորմութեան» ու ողորմած լինել որբերի, տնակների, հիվանդների, այրիների եւ առհասարակ բոլոր անբաղվորների նկատմամբ, քան ի զմիայն այդպէս կարելի է մեղքերի թողութիւն եւ փրկութիւն գտնել. «...Այլ թե՛ կամիցիս մեղաց քոց թողութիւն խնդրել, կոչեա գործս եւ գայրիս, զնեղեալս եւ գտառապեալս, զխեղս եւ զկոյրս եւ զկաղս, զկարօտեալս եւ զգեղիս, եւ զամենայն քաղեալս եւ զանմխիթարս. զնոսա կերակրեա, նոցա միայն զստաւորեա, զնոսա մխիթարեա, զնոսա սփոփեա, զնոքօք չրջեա, զնոսա յարմարեա, եւ քաղցր բարկօք պաշտեա, զի թողութիւն մեղքս եւ փրկութիւն տան քո նեղցի...» (անդ, էջ 59):

«Վասն ուխտապահաց եւ քիսահանաց» ճառում դատապարտվում են հիշադրությունն ու վրեժխնդրությունը՝ համարվելով մեղքերից վատթարագույնը: «Անեղ անթուրեմս եւ սաստիկ չարութիւն տեսանեմք զոխապահացն եւ զքիսահանացն քան զամենայն զնեղաց անթուրեմս. զի ամենայն մեղք եւ անթուրեմս երբեմն սաստկանալ քորքոքն եւ երբեմն դադարեն: Իսկ չարայուշ քիսահանութիւն թե՛ քան ինչ ընդդիմութեանց լնկելուն ինչ լսիցէ՝ միշտ բորբոքի յանթուն ի խորամանկացն խորհուրդ...» (անդ, էջ 108):

«Վասն ըստ սովորութեան երդման» ճառը խիստ արդելում է երդվել՝ այն թուրքադրելով որպէս պիղծ եւ ստատալական սովորություններ: Զրիստոսն ինքն էլ Նոր Կտակարանում արգելում է այն. «Եւ ասէ Մովսէս՝ թէ ամենէին մի՛ երդնուցուս սուտ. այլ ես ասեմ. ամենէին մի՛ երդնուցուս, մի՛ յերկինս՝ զի այտօք է Աստուծոյ, մի՛ յերկինս՝ զի պատուանդան է ուտից նորա, եւ մի՛ յերուսաղէմ՝ զի քաղաք է արքայի մեծի, եւ մի՛ ի զուլս զ երդնուցուս՝ զի ոչ կարեն մագ մի սպիտակ աննել կամ թուխ...» (անդ, էջ 118):

Լ. ԲԵՐԴՅԱՆԵԿ



Սկիզբը թիվ 4

Մեծ Հավատաքննիչը Զրիստոսի ատում է այն, ինչը սովորաբար սոցիալիստներն են ասում քրիստոնյաներին. «Ազատությունը եւ բոլորի համար լիովին երկրային հացն ու համատեղելի են, վասնզի նրանք երբեք, երբեք չեն կարող հավասար բաժանվել միմյանց միջեւ: Նաեւ կիսմոզվեն, որ երբեք չեն կարող նաեւ ազատ լինել, որովհետեւ թերու՜մ են, արատավոր, չնչին ու խռովաբար: Դու նրանք երկային հաց խոստացար, բայց Քո խոստացածը տկար, հավերժ արատավոր եւ հավերժ անշտրիակալ մարդկային ցեղի աչքին կարող է համեմատվել երկրային հացի հետ: Եվ թե՛ հա՛նուն երկային հացի հազարավորներ ու տասնյակ հազարավորներ հետեն ենք, ապա ի՞նչ կլինի միլիոնավոր եւ տասնյակ միլիոնավոր էակների վիճակը, որոնք ուժ չեն ունենա երկրային հացը արհամարհելու՝ հա՛նուն երկայինը: Թե՛ Զեզ համար թանկ են լոկ տասնյակ հազարավոր մեծերն ու գործավորները, իսկ ծովի ավազի չափ անհաշիվ միլիոնները, որոնք տկար են, բայց սիրում են Զեզ, պետք է միայն նյութ ծառայեն մեծերի ու հզորների համար:

Ո՛հ, մեզ համար թանկ են նաեւ տկարները: «Հանուն այդ նույն երկրային հացի՝ Քո դեմ կծառանա երկրի ոգին եւ կմարտնչի Քո դեմ ու կհաղթի Զեզ, եւ բոլորը կհետեն նրան... Զո տաճարի տեղում կկառուցվի մի նոր շենք, կրկին կբարձրանա բարեբեկության սոսկվի աշտարակը: Աթերիստական սոցիալիզմը քրիստոնեությանը միշտ մեղադրում է այն բանում, որ այն մարդկանց երջանիկ չի դարձրել, նրանց հանգստություն չի պարգևել, չի կերակրել նրանց: Եվ աթերիստական սո-

ՄԵԾ ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉԸ. ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴ ԵՎ ՄԱՐԴԱՍՏՎԱԾ

«Դոստունկու աշխարհայացք» գրքից

ցիալիզմը քարոզում է երկրային հացի կրոնը, որի հետեւից միլիոնավորները կզանձվեն: Ընդդեմ երկային հացի կրոնի, որի հետեւից միայն քչերը կզանձվեն: **Բայց քրիստոնեությունը մարդկանց չեղանակացրեց եւ նրանց չկարակրեց միայն այն պատճառով, որ այն չի ընդունում մարդկային ոգու ազատության, խղճի ազատության կրթությունը, քանի որ ուղղված է մարդկային ազատությանը եւ նրանից Զրիստոսի պատմիկականների կատարում է ակնկալում:** Զրիստոնեությունը չէ մեղավոր, որ մարդկությունը չկամեցավ կատարել այն եւ դավաճանեց նրան: Դա մարդու մեղավորությունն է եւ ոչ թե՛ Աստվածամարդու: Աթերիստական եւ մատերիալիստական սոցիալիզմի համար ազատության այդ ողբերգական խնդիրը գոյություն չունի: Այն պատում է իր դիպրոմանը եւ մարդկության ազատագրմանը կյանքի հարկադիր նյութական կազմակերպումը: Նա ուզում է հաղթել ազատությանը, մարդը կյանքի իռացիոնալ սկիզբը՝ հանուն երջանկության, հանուն հարստության եւ հանգստության: «Մենք նրանց կպարգեւենք խաղաղ, խոնարհ երջանկություն, անգոր էակների երջանկություն, ինչպիսին որ նրանք են ի վեր: Օ՛, մենք վերջապես կիսմոզենք նրանց, որ չկարտաւանս, քանի որ Դու նրանք բարձրացրիք եւ դրանով իսկ սովորեցրիք հպարտ լինել... Մենք նրանց կստիպվենք աշխատել, բայց աշխատանքից ազատ ժամերին մենք կկարգավորենք նրանց կյանքը, ինչպես մանկական խաղը՝ մանկական եղբորով, տոնախմբություններով եւ անմեղ պարերով: Օ՛, մենք նրանց կբույստարենք նաեւ մեղք գործել, քանի որ նրանք տկար են եւ անգոր: Մեծ Հավատաքննիչը խոստանում է մարդկանց ազատել «անձնականը եւ ազատությունը լուծելու մեծ հոգիքն ու սարսափելի տանջանքներից: Եվ բոլորը՝ միլիոնավոր այդ էակները, երջանիկ կլինեն»: «Մեծ Հավատաքննիչը հեռացավ հպարտներից եւ վերադարձավ խոնարհների մոտ՝ այդ խոնարհների երջանկության համար: Եվ, ի արդարացունս իրեն, նա կմատնանշի «տասնյակ միլիոնավոր մեղք չճանաչող երջանիկ մանուկներին»: Իսկ Զրիստոսին նա մեղադրում է հպարտության համար: Դոստունկին այդ մոտիվը կրկնում է: «Դեռահասը» վիպակում Վերսիլովի մասին ասում են. «Նա շատ հպարտ մարդ է, իսկ այդ հպարտ մարդ-

կանցից շատերը, հատկապես մարդկանց արհամարհողները, հավատում են Աստծուն: Այստեղ պատճառը պարզ է. նրանք Աստծուն են ընտրում, որպեսզի մարդկանց առջեւ չխոնարհվեն, որովհետեւ Աստծուն առջեւ խոնարհվելն այդ աստիճանի վիրավորական չէ»: Աստծուն հավատալը՝ ոգու բարձրության, անհավատությունը ոգու ցածրության նշան է: Իվան Կարամազովը հասկանում է Աստծու գաղափարի գլխավորույթ բարձրությունը: «Զարմանալին այն է, որ այդպիսի մի միտք՝ Աստծու անհրաժեշտության մասին միտքը, կարող է վայրի ու չար այնպիսի մի կենդանու գլուխը մտնել, ինչպիսին մարդն է, քանզի այն այնքան սուր է, այնքան հուզիչ, այնքան իմաստնագույն եւ այնքան մեծ պատվի է արժանացնում մարդուն: Թե՛ գոյություն ունի մարդու գերագույն բնություն, գերագույն նպատակի կոչում, ապա գոյություն ունի նաեւ Աստված, այսինքն՝ հավատը առ Աստված... Իսկ թե՛ Աստված չկա, ապա չկա նաեւ մարդկային գերագույն բնություն, ապա մարդ է միայն հարկադրանքի վրա հեկված հասարակական մրջանոցը: Եվ Դոստունկին Անաստիվում բացահայտում է հասարակական ուտոպիայի պատկերը, որը կրկնում է Շիգայովը, եւ այն կրկնվում է ամենտուր, որտեղ մարդն անընդուն է հասարակական գալիք ներդաշնակության մասին:

Անաստիվում Զրիստոսի մերժած երեք փորձություններում Նախագուշակված է «մարդկության հետագա ողջ պատմությունը, եւ ի հայտ է բերված երեք կերպար, որոնցում ի մի են գալիս երկրի վրա մարդկային բնության պատմական անլուծելի բոլոր հակասությունները»: Զրիստոսը փորձությունները մերժեց հանուն մարդկային ոգու ազատության: Զրիստոսը չկամեցավ, որ մարդկային ոգին ստրկանար մեղավոր, հրաշքներ եւ երկրային թագավորությունը: Մեծ Հավատաքննիչը հանուն մարդկանց երջանկության եւ հանգստության ընդունում է բոլոր՝ երեք փորձությունները: Երեք փորձություններն ընդունելով՝ նա հրաժարվում է ազատություն: Ամենից առաջ նա քարտեղ հաց դարձնելու փորձությունն է ընդունում: «Դու մերժեցիր միակ բացարձակ դրոշմ՝ երկրային հացի դրոշմը, որն առաջարկվեց Զեզ, որով բոլորին կստիպվիր անվիճելիորեն խոնարհվել Քո առաջ: Ընդ որում՝ այն

մերժեցիր հանուն ազատության ու երկային հացի»:

Երեք փորձությունների ընդունումն էլ հենց կլինի երկրի վրա մարդու վերջական հանգստությունը: «Դու կիրառործեիր այն ամենը, ինչը մարդը տեսնում է երկրի վրա, այսինքն՝ ում առջեւ խոնարհվել, ում վստահել խիղճը եւ վերջապես ինչպես մարդկորվել անառարկելի, համընդհանուր ու համեմաշխ մրջանոցին, քանզի համաշխարհային միավորման պահանջը մարդկանց երրորդ եւ վերջին տառապանքն է»: Մեծ Հավատաքննիչի համաձայն լուծում է մարդկանց երկրային կյանքի կազմակերպման բոլոր հարցերը:

Մեծ Հավատաքննիչի խորհուրդը այն է, որ նա Զրիստոսի հետ չէ, այլ *նրա* հետ: «Մենք Զեզ հետ չենք, այլ *նրա* հետ, ասիա մեր խորհուրդը»: Մեծ Հավատաքննիչի ոգին՝ Զրիստոսին հակաքրիստոսով փոխարինող ոգին, պատմության մեջ դրսևորվում է տարբեր կերպարանքներով: Դոստունկու համար կաթոլիկությունը՝ եկեղեցին պետության վերածող պապական աստվածապետության իր համաձայնագրով, Մեծ Հավատաքննիչի ոգու կերպարանքներից է: Այդ նույն ոգին կարելի է բացահայտել ե՛ւ բյուզանդական ուղղափառության, ե՛ւ ցանկացած կեսարականության, ե՛ւ ցանկացած իմպերիալիզմի մեջ: Բայց իր սահմանները ճանաչող պետությունը ոչ մի դեպքում Մեծ Հավատաքննիչի ոգու արտահայտությունը չէ, չի բռնանում ազատության ոգու վրա: Զրիստոնեությունն իր պատմական ճակատագրով մշտապես ենթարկվել է ոգու ազատությունից հրաժարվելու գայթակղությանը: Եվ քրիստոնյա մարդկության համար ավելի զմայլող ոչինչ չի եղել, քան քրիստոնեական ազատությանը հավատարմի մնալը: Իրապես. մարդու համար չկա ավելի տանջող եւ անտանելի բան, քան ազատությունը: Եվ մարդը տարբեր միջոցներ է գտնում ազատությունից հրաժարվելու, իր վրայից այդ լուծել թողափելու համար: Դա տեղի չի ունենում միայն քրիստոնեությունից հրաժարվելու ճանապարհով, այլ իրականա-նում է նաեւ հենց քրիստոնեության ներսում: Մարդկային կյանքն այն ավելի տանջող, որն այդպիսի դեմ է կատարել քրիստոնեության պատմության մեջ, հրաժարում է Զրիստոսի ազատության եւ խաչված Աստծու խորհուրդներից:

Շարունակությունը՝ էջ 6

ՎԵՐԱԳՐՎՈՐ ՃԱՌԵՐԸ

Բարեխնամ Հայրապետին մտադեմ է նաեւ ժողովրդի ներքին հոգեւոր կյանքը, հզորության եւ ուժի աղբյուր համարելով ազգային միասնությունն ու միաբանությունը՝ նա սեր ու ներդրումություն է քարոզում. «...Ճա մենայն որ սիրէ զԱստուած, սիրէ նաեւ գերբայր իւր. զի սերն Աստուծոյ սիրով երթորն երեւի...» (անո, էջ 212-213), ապա շարունակում է. «Ընդ սերն է, անդ երկիր ոչ է. որպէս եւ Յովհաննէս ասէ. «Երկիր ոչ գոյ ի սերն, այլ սեր կատարեալ ի բաց մերժէ գերկիւր»: Չի երկիրը ընդ տանջածք է, եւ սեր ի համարձակութիւն: եւ զի երկիրը հայածի ի սիրոյ: եւ ուր սեր ոչ է, անդ է երկիրը դառատասկին, եւ ահ կորստեան յաւուր մեծի ահեղ տանելին: Իսկ սեր աներկիրը անձն գմար յամենայն տանջանաց: Սեր զայն ասեմ, որ ամենեւին հեռի է յերկրաբնութեն: Չի երկրաբնութիւն եւ սեր ի միասին ոչ քնակէ: Եւ գիտելի՜ է՝ զի սերն ոչ միայն ի վեանայն յալիտենականս պողոթբերէ զպտուղ խաղաղութեան իւրոյ, այլ եւ յաշ-


խարհիս յայսմիկ զամենայն թշնամութիւն ի բաց հայած, զնախանձ եւ զատելութիւն, զոխակալութիւն եւ զգարակնութիւն, զգարախոսութիւն եւ զհայիդու-թիւն, զտրտունք եւ զբամբասանս...» (անո, էջ 212-213):

Հովհան Մանդակունիի Հայրապետին վերագրվող ճառերի ժողովածուն իրավամբ կարելի է համարել հայ ճարտասանական գրականության գլուխգործոցներից: Հեղինակը կիրառել է ճարտասանական բազմապիսի հնարքներ՝ նպատակ ունենալով իր խոսքն առավել ազդեցիկ դարձնել: Լ. Տեր-Պետրոսյանն իր աշխատության մեջ ճառերի վրա ժողովածուն բնութագրում է այսպես. «Խոսքն աչքի է ընկնում դիպուկությամբ եւ գունագեղ պատկերավորությամբ, այն մերթ խիստ է եւ ազդու, մերթ հանդարտ եւ միաթափուր, մերթ ըմբոստացող եւ պախարակող: Ժողովածուն իրենց դրսևորում է զուեւեռ հատկապես ճարտասանական հետելալ հնարքները՝ կրկնություն, հակադրու-

թյուն, հռետորական հարց, հռետորական բացականչություն, համեմատություն, նմանաձայնություն (ալիտրոպիա) եւ այլն» («Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից», էջ 56):

Հարուստ բառապաշարով ու գեղեցիկ ոճով առանձնանում է նաեւ «Չքէն գոհանամք» աղոթքը, որն արտացոլում է Հովհան Մանդակունի ան Աստված տաճած անասանս սերն ու հավատքը. «Չքէն գոհանամք, Տեր Աստուած մեր, որ շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութեամբ: Եւ զաղթուցեալ ժամանեցուցեր զմեզ կանխել յերկրագործին անաւոր եւ փառաւորեալ անուան ըսմ արքոյ: Տո՛ւր մեզ, Տէ՛ր, աղաչեմք զքեզ, զմնացումս զիշերիս խաղաղութեամբ անցուցանել. եւ զամենայն ժամանակս կենաց պակտութեան մերոյ, երկիրիդ ըր մարցո՛ղ եւ պահեա՛ն...» («Ժամագիրք», Երեսուրդ, 1955, էջ 38):

Հայոց տոնացույցից տեղեկանում ենք նաեւ. «Յովհան



Մանդակունի վերականգնեց Մանուկարի 6-ը իբրեւ Զրիստոս Ծննդեան եւ Աստուածայայտութեան միասնական օր, ինչպես եւ խմբագրեց «Կանոնք ընթերցումից»-ի որոշ յատուածներ՝ կանոնելով նոր տոնակարգեր համապատասխան ընթերցումներով, որոնք երեսում են ինչպես նրա կանոններից, այնպես էլ «Կանոնք ընթերցումա-

ծոց»-ի լատելումներից եւ VI դարի տունալներից» (Ռ. Վարդապետյան, Հայոց տոնացույց, Երեսուրդ, 1999, էջ 106): Իր այս կարգադրությամբ Հայոց Հայրապետը վերականգնում է նաեւ Հայ եկեղեցու ծիսական ինքնությունը եւ ընդգծում տարբերությունը Հայն եւ Հռոմեական եկեղեցիներից:

Արփին ՉԱՆԹԻՎԱՆ

ՆՈՎԻՎԼ ՈՒ ՆՐԱ ՆՈՏԸ

ՊԱՇՏ

Ձեր հարցերին դասասխատում է Սարյա Սթոք Սթեֆանի միաբան Վահան սարկավազ ՍԱՂԱՎԱՆԸ

Ձեր անունից հարցերն ուղղում է Սարհամ ԱԿԵՏԻՍՅԱՆԸ

- «Երբ ծով պահեց, տրտմեքս մի՛ լինեք կեղծավորների նման» (Սաթոթ, 2 16),- ասում է Զրիստոսը: Վահան՝ սարկավազ, ո՛րն է ձեր արտաքին պահեցողությունը:

- Հրեաների մոտ պահեցողությունն արտահայտվում էր արտաքին ձեռնարկով, նստում էին մոխիր վրա, գլխերին մոխիր ցանում, արտաքինից հստակ երևում էր, որ այդ մարդը պահեցողության մեջ է: Զրիստոսը քննադատում է այս ցուցանիշը երեւոյցն է հակառակն է պատվիրում: «Երբ դու ծով պահես, օծի՛ր քո գլուխը եւ լվա՛ր» քո երեսը, որ պեզվի չերեսս մարդկանց որպէս ծով պահող, այլ քո հորը՝ զարդաւաքար, եւ քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ» (Սաթոթ, 2 17-18):

Եսայի մարգարտության մեջ Տեղը նախատում է հրեաներին, «Ձեր ծովապահության օրերին ձեր ցանկություններն եք կատարում եւ կսկսի՛ք պատճառաւ բոլոր նրանց, ովքեր ենթակա են ձեզ» (Ես. ԾԾ 3): Այսինքն՝ Աստծուն պետք է, որ մենք այդ օրերին ավելի եւս աշխատենք՝ կատարելու համար Իր կամքը՝ Իրեն մոտենալու համար: Մարգարտության մեջ նաեւ ասում է, որ եթե դու պատռես անիրավ մոխրակները, ողորմություն անես, քո լույսն արեգակից ավելի պայծառ կլուսավորի, եւ «Աստված պիտի լսի քեզ, մինչեւ դու խոսես» (Ես. ԾԾ 9): Այսինքն՝ հարկ է լինել ողորմած, ներողամիտ, հետ կանգնել արած անիրավություններին եւ Աստծո կամքը կատարելու հանձնառություն ունենալ: Մարք ձեր արտաքին պահեցի ամենակարեւոր բաղկացուցիչներն են:

- Բայց չէ՞ որ քրիստոնյան բոլոր օրերին պետք է ապրի այս առաքելություններով, հետեւի Աստծո կամքին: Ինչո՞ւ կառանձնացնեք պահեցողությունը կյանքի մյուս օրերից:

- Նախ՝ պահեցի ընթացքում պետք է հրաժարվել վատ սովորություններից: Ինչպես ճիշտ նկատեցիք, պահեցի ընթացքում է, որ պետք է հրաժարվել դրանցից, այլ՝ միշտ: Պահեցի ընթացքում շատ բաներից մեզ հեռու ենք պահում, որոնք, ըստ էության, չար չեն, բայց դրանցից հրաժարումը ցույց է տալիս մեր դիրքորոշումն առավել կարեւորի նկատմամբ, քանի որ Աստված, Ուրիշ մենք բաժանված ենք, մեզ համար շատ ավելի կարեւոր է, եւ մենք թողնում ենք ամեն ինչ՝ Նրան գտնելու համար: Պահեցի ընթացքում պետք է հրաժարվել նրանից, ինչը մեզ խանգարում է Աստծո հետ հաղորդակցության մեջ մտնելու համար: Տեղն ասում է: «Եթե քո աչ ձեռքը քեզ զայրալեցնում է, կտրի՛ր այն եւ դե՛ս գցի՛ր քեզից, որովհետեւ քեզ համար լավ է, որ քո անդամները մեզ կորչի, եւ քո ամբողջ մարմինը չընկնի գետին» (Մատթ. Ե 30): Այսինքն՝ եթե որեւէ բան ինձ խանգարում է Տիրոջ հետ լինել, ես պատրաստ պիտի լինեմ հրաժարվելու դրանից: Պահեցի ընթացքում ճշում ենք մարմնի հատկացված բաժինը, որպէսզի մեր հոգեւոր մասը գործնա եւ Աստծուն տեսնելու հնարավորություն ունենա: Ի վերջո, պահեցի, ինչպես նաեւ քրիստոնյայի բոլոր գործողություններին նպատակն Աստծո հետ հանդիպումն է, եւ պահեցի է ներքին մի ճամփորդություն է դեպի Աստված:

Մարմնի պահանջի բավարարման հետեւող մարդն անընդհան սկսում է մտածել իր մարմնի կարիքները հոգալու մասին՝ մոռացության մատնելով հոգեւորը: Եվ պահեցի ընթացքում, մի կողմ դնելով մարմնի կարիքները, ավելի շատ ժամանակ եւ ուժ ենք հատկացնում Աստծո կամքը կատարելու համար: Զառանգողական պահեցի նպատակը Զրիստոսին հետ անապատ մտնելն է, Նրա հետ միասին փորձությունների միջով անցնելը, դրանք հաղթահարելը, Զրիստոսի հետ միասին հաղթանակած երուսաղեմ մտնելը, Նրա հետ վերջին շաբաթն ապրելը, Նրա հետ խաչ բարձրանալը, մեռնելը մեղավոր մարդուն եւ երրորդ օրը Զրիստոսի հետ հարություն առնելը:


- Իսկ ինչպէ՞ս հաղթահարել պահեցող օրերի փորձությունները:

- Ինչպես մեր կյանքի բոլոր պահերին, այս դեպքում եւս Զրիստոսը մեզ օրինակ է տալիս: Երբեք փորձությունները, որոնց միջով անցավ Տեղը, ըստ էության, կրկնվում են եւ մեր կյանքում: Մարմնի կարիքի փորձությունը (որ քաղցի տեսքով էր), մեր՝ անկոնկնելի լինելով զայրալեցությունը (երբ սատանան ասաց՝ «Եթե քեզ ցած նետես, իրեշտակները ձեռքերի վրա պիտի վերցնեն քեզ»), եւ վերջինը՝ իշխանության, փառքի զայրալեցությունը (երբ սատանան Զրիստոսին ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորություններն ու ասաց, որ այս ամենը Նրան կտա): Թեեւ սատանային հնարամիտ ենք անվանում, բայց, ըստ էության, մեթոդները, որով նա մոտենում է, գրեթե չեն փոխվում: Եվ Զրիստոսի ու մեր լինելու հայրերի ապրած կյանքի օրինակով եւ նրանց փորձառությունները կարող ենք ճանաչել դա եւ իմանալ՝ ինչպէս հաղթանակել դրա դեմ: Զրիստոսն իբրեւ մարդ անցավ փորձությունների միջով եւ հաղթեց սատանային: Եվ գենք, որ Նա տալիս է մեզ 40-օրյա մեր պահեցի ժամանակ, Սուրբ Գրքին է:

- Հայրերը նշում են, որ պահեցողության կարեւորագույն բաղկացուցիչներն են աղոթքը, զոջումը, ապաշխարությունը, Սուրբ Գրքի ընթերցումը: Ի՞նչ կատեք սրանց մասին:

սի հետ անապատ մտնելն է, Նրա հետ միասին փորձությունների միջով անցնելը, դրանք հաղթահարելը, Զրիստոսի հետ միասին հաղթանակած երուսաղեմ մտնելը, Նրա հետ վերջին շաբաթն ապրելը, Նրա հետ խաչ բարձրանալը, մեռնելը մեղավոր մարդուն եւ երրորդ օրը Զրիստոսի հետ հարություն առնելը:

- Ապաշխարել նշանակում է հեծել, ցավել, այսինքն՝ զղումով լաց լինել: Մենք լաց ենք լինում, երբ կորցնում ենք մեր հարազատներից մեկին: Ապաշխարությունն էլ մի տեսակ ողբ ու կոծ է մեր մեռած անձի վրա, քանի որ մեզի պատճառով կորցրիք մեր կյանքը: Իսկ կյանքից զրկվել՝ քրիստոնյայի համար նշանակում է զրկվել Զրիստոսից: Տեղն Ինքն է ասում՝ «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը» (Յով. Ժ 6): Ուրեմն՝ քրիստոնյայի համար կյանք նշանակում է լինել Զրիստոսի միացած, մահ՝ բաժանվել Նրանից: Իսկ Զրիստոսը ինձ զրկում, բաժանում է իմ մեղքը: Եվ պահեցողության ժամանակ, մաքրվելով մեղքերից, մենք փափագում ենք Զրիստոսի նոր կյանքը, որ պիտի սրբի մեր արտաուղեները: դա Սբ Հայրությունն է: Աղոթքի, Սուրբ Գրքի ընթերցանության, խոկումների մեջ պետք է չափավոր լինել: Ասում են՝ մարդու հավատքը շիկացած ածուխ է, որ Աստված դնում է փայտի խորի վրա, որ մարդու հոգին է: Նապատակն է, որ հավատքը բոցավառի, խարոյկ առաջացնի մարդու մեջ: Տեղն Ինքն էլ ասաց, «Երկրի վրա կրակ գցելու եկա, եւ ինքե՛ս եմ կամենում, որ արդեն իսկ բոլորված լինի» (Ղուկ. ԺԲ 49): Եվ մարդն աղոթքով, ընթերցանությամբ փչում է այդ ածուխի վրա, որպէսզի այն բռնկի փայտի խորքը: Մեղքերն էլ ջրի նման խոնավացել են փայտերը: Եթե



մենք ածուխի վրա շատ ուժեղ ենք փչում, այն կամաց-կամաց մասնակներ է բաց թողնում եւ աստիճանաբար փոքրանում ու անհետանում: Երբ թույլ ենք փչում կամ ընդհանրապէս չենք փչում, սառչում ու անկշռում է: Երկու դեպքում էլ խարոյկ չի լինում: Այս պատճառով պետք է պարբերաբար, ոչ շատ ուժեղ կամ թույլ, այլ չափավոր փչել դրա վրա, որպէսզի փայտերը չորանան, եւ վառվի խարոյկը: Այս օրինակը վերաբերում է աղոթելու կարգին, Ավետարանի ընթերցանությանը: Զրիստոնյայի համար կարեւոր է իր հոգեւոր փորձառության մեջ աճ ունենալ: Իսկ սրա համար պետք է որոշակի՝ չափավոր քանակի աղոթք, Ավետարանի ընթերցում: պետք է աղոթել չափավոր, բայց միշտ: Լինում է շրջան, երբ մարդը դադարում է աղոթել, չի կարողանում Սուրբ Գրքը կարդալ, սրա պատճառներից մեկն է չափի զգացում չունենալն է: Միաժամանակ մարդուն պետք է հոգեւոր հայր, ով իրեն կրա աղոթքի, ընթերցանության չափն ու տեսակը: Կարելի է, օրինակ, ամեն առավոտ ապետարանական մի կարճ հատված կարդալ, օրվա ընթացքում մի քանի անգամ աղոթել՝ արթնանալուց եւ քնելուց, ուտելուց կամ ճանապարհ գնալուց առաջ եւ այլն: Օրինակ՝ կարելի է ընթերցել Շնորհալու «Հավատով խոստովանի» աղոթքը:

Շարունակությունը էջ 8



Սկիզբը՝ էջ 5

Քրիստոնեական ազատության խորհուրդը հենց Գողգոթայի, խաչելության խորհուրդն է: Խաչին գավառ արդարու-

ՄԵԾ ՆԱԿԱՏԱՔՆՆԻՉԸ. ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴ ԵՎ ՄԱՐԴԱԱՍՏՎԱԾ

թյունը ոչ ոքի վրա չի բռնանում, ոչ ոքի ուրեւ քան չի հարկադրում: Այդ ազատությունը կարելի է միայն ազատ ներպով ճանաչել եւ ընդունել: Խաչված ճշմարտությունն ուղղված է մարդկային ոգու ազատությանը: Խաչված չիղջալ խաչից, ինչպես նա Նրանից պահանջում էին անհավատները եւ պահանջում են մինչեւ մեր օրերը, քանզի՝ «Ճարավի եր ազատ սիրո, այլ ոչ անազատի ստրկական իրացնելի» այն զորության առջեւ, որից նա մենքնոմիշտ սարսափում էր: Աստվածային ճշմարտությունը երկրում հայտնվեց այս աշխարհի ուժերի կողմից նկատազանգված, խոշտանգված եւ խաչված, եւ դրանով հաստատվեց ազատության ոգին: Իր կարողությամբ ապշեցնող, աշխարհում հաղթանակող եւ իր զորությամբ մարդկանց հոգիները նկաճող աստվածային ճշմարտությունն ազատություն չէր պահանջի՝ իրեն ընդունելու համար: Այդ պատճառով Գողգոթայի խոր-

հուրը հենց ազատության խորհուրդն է: Աստծու Որդին պետք է խաչվեր այս աշխարհի ուժերի կողմից, որպէսզի հաստատվեր մարդկային ոգու ազատությունը: Հավատի արմատ ազատության ակունք է, անտեսանելի իրերի ազատ բացահայտումը: Քրիստոսը՝ իբրեւ Հոր աշ կողմում նստող Աստծու Որդի, տեսանելի է միայն ազատ հավատքի ակտի համար: Ոգու ազատությանը հավատացողին տեսանելի է Խաչյայի հրաշափառ հարությունը: Իսկ տեսանելի իրերի աշխարհից պարտված եւ ճնշված անհավատին տեսանելի են միայն հյուսն Հիսուսի խայտառակ մահապատիժը, այն բանի պարտությունն ու կործանումը, ինչն իրեն աստվածային ճշմարտություն էր երեւակայում: Այդտեղ է թաքնված քրիստոնեության ամբողջ խորհուրդը: Եվ ամեն անգամ, երբ քրիստոնեության պատմությունն մեզ փորձել են ոգու ազատության ուղղված խաչված ճշ-

մարտությունը դարձնել ոգու վրա բռնացող միահեծան հեղինակության ճշմարտություն, քրիստոնեության հիմնական խորհուրդը միշտ ենթադրվում է: Կրոնական կյանքում հեղինակության գաղափարը հակադիր է Գողգոթայի եւ խաչելության խորհուրդներին, այն ուզում է խաչելությունը վերածել այս աշխարհի հարկադրող ուժի: Այս ճանապարհին Եկեղեցին միշտ պետության կերպարանք եւ կայսեր թուրն է ընդունում: Եկեղեցական կառույցն իրավական քննություն է ստանում, Եկեղեցու կյանքը ենթարկվում է իրավական հարկադրող նորմերի: Եկեղեցական դավանաբանական համակարգը ռազիոնալ քննություն է ստանում: Քրիստոսի ճշմարտությունը ենթարկվում է տրամաբանորեն հարկադրող նորմերի: Բայց արդյո՞չ աս չի նշանակում, թե Զրիստոսին հավատարու համար ցանկանում են, որ Նա իջնի խաչից: Խաչի անմոտության, խաչված ճշմարտության խորհուրդի մեջ իրավական եւ տրամաբանական համոզականությունն ու հարկադրանք չկան: Քրիստոսի ճշմարտության իրավականացումն ու ռազիոնալացումն էլ հենց ճշմարտության ճանապարհից հարկադրանքի ճանապարհին անցնելն են:

Շարունակելի
Ուտեղիցքի թաղով
Գեորգ եպս ՍԱՐԳՍՅԱՆԸ

Հովհան Օձնեցին ընդդեմ երեութականների



Սկիզբը՝ թիվ 4
Երեութականները Զորատուհն վերագրում էին միայն աստվածային եղբայրներին՝ Նրա մարդկային բնությունն անհրաժեշտ համարելով։ Նրանք ընդունում էին, որ Զորատուհն մարմինն այնքան սերտաճած է աստվածային բնությանը, որ չունի մարդկային բնությանը բնորոշ գծեր, այսինքն՝ Զորատուհն չունի իսկական մարդկային մարմին։ այն լուր երեսույթ է մարդկանց աչքին։ Այս աղանդի հետևորդները չեն ընդունում Զորատուհն մարմնացումը եւ իրական մարդ լինելը։ Նրան հատկացվել է գերմարդկային բնություն եւ երեութական մարմին, ուստի Զորատուհն ծնունդը, կյանքը, չարարանքները, խաչելությունն ու մահը համարվել են երեսութական։ Օձնեցին, մերժելով երեութականությունը, իր ճառում բնկառուում է Նրանց այդ ծայրահեղ միաբնականությունը՝ Նշելով, որ Հիսուսը նաեւ կատարյալ մարդ էր, հետեւաբար Նրա մարմինը եւ մարդկային բնությունը երեութական չեն։ «Թեեւ ասեմք մի բնություն մարմնացելով, ոչ այդպես ինչպեղ եւ չաղջալ ստաժծաժողովք, որպես թե միայն մի միւսման է ի բաց բարձեայ եւ կամ լուծեմք ի միմեանց»։ Կաթողիկոսը Նշում է, որ Զորատուհն բաղկացած է կատարյալ մարդկային եւ աստվածային բնություններից։ Ուստի Նա երկու Եղբայրն ունի, սակայն այդ երկուսն այնպես են միացել, միասինվել իրար, որ պետք է խոսել միայն մի բնության մասին՝ հասկանալով երկուսը՝ որպես անբաժանելի միությունը եւ մեկ՝ աստվածամարդկային բնությունը։

Ըստ Նրա՝ երեութականները Զորատուհն մարդկային բնությունը չվերագրելու համար Նշում են, թե Նա ոչ թե «ի կուսեմ է մարմնացեալ, այլ՝ «ի կուսիս», այսինքն՝ մարմնացել է ոչ թե Կուսից, այլ Կուսից մեջ։ Այդ առիթով Օձնեցին վկայակոչում է Ավետարանի այն խոսքերը, որտեղ հիշատակն ասում է, որ Զորատուհն Մարիամից է ծնվելու, որ ոչ թե, որ Մարիամի մեջ է։ Զորատուհնային հետ հիշատակն է ասել ցնա. «Հոգի՛ սուրբ եկեացէ՛ք ի բեզ, եւ գալուսիսն բարձրելո՛ք հովանի» լիցի՛ք ի վերայ ջո. բազկի եւ որ ծնալեցո՛ք ի ի բե՛ւ՝ սուրբ եւ, եւ որդի՛ Մատուծոյ կոչեցա՛ք» (Նով. Ա 35)։ Երեութականները, ի բնությունն ասելով, Աստուծո՛ւ ունեն աստվածայինը, իսկ մարդկայինը կոչում են ոչ թե բնու-

թյուն, այլ մարմին։ Դրան ի պատասխան՝ Հովհան Օձնեցին գրում է. «Աստվածային Բանի անմարմին բնությունը կոչիցք ընկալաւ մարմնական բնություն, միաւորեց իր հետ» որով երա՛ւ ըստ բնութեան՝ երկու՛ աստվածային են մարդկային, ըստ միավորութեան՝ մի»։

Այսինքն՝ Բանը՝ Զորատուհն, ս. Կուսից առավ կատարյալ մարդկային բնություն եւ այն միավորեց Հորից ստացած կատարյալ աստվածային բնության հետ՝ անխառն եւ անշփոթ կերպով։ Զորատուհն մեջ այդ երկու բնություններն այնպես անշփոթ են միացած, որ դրանք բաժանել չի կարելի։ Նա կատարյալ մարմնով հայտնվեց մարդկանց եւ աշակերտներին, գործեց որպես կատարյալ մարդ, հրեական օրենքի համաձայն՝ թվառվեց, մարտվեց Հովհաննես Մկրտչի կողմից։ Սուրբ հայրապետը տեղին է հիշում նաեւ Ղուկասի Ավետարանի խոսքերը. «... շաւաղիցե՛ք զիս եւ տե՛ւք. զի ոգի՛ մարմին եւ ոսկերս ո՛չ ունի, որպէ՛ս զի տեսանե՛ք զի ունի...» (Ղուկ. ԻԴ 39)։

Երեութականների դեմ պայքարի ընթացքում խոսվում է Զորատուհն մարմին՝ ապականացու կամ անապական լինելու մասին։ Չաղեք գալով Նրանց դեմ՝ Հովհան Օձնեցին ասում է, որ Զորատուհն չարաբերի է մարմնով եւ անչարաբերի՝ աստվածությամբ։ Զորատուհն քաղցեց՝ ըստ մարմնի, ծարավեց, հոգեց, լնեց՝ ցուց տալով մարդկային բնության ճշմարտացիությունը, եւ դրանով կատարեց մարդկային բնության յուրահատկությունները։ Բայց դրանք մարդկային մարմնին բնորոշ կարիքներ են եւ ոչ մեղ են, ոչ էլ՝ ապականություն։ Այդ կարիքներն չեն ծառայում մեղքին եւ դեպի մեղք չեն տանում։ Զորատուհն նաեւ վշտացավ, տրտմեց. «Յայժմս՝ ասէ ցնոսա. Տրտում է ոգի իմ միկե՛ք ի մահ...» (Մատթ. ԻԶ 38), սակայն դա ապականություն չէր։ Դրանք բնական կրքեր են, որ բնությունից են տրված, իսկ մեղք ծնողները մեր մեջ հետո են առաջանում։ Զորատուհն ստացել է մարդկային բոլոր կրքերը՝ բացի մեղքից (բացի այն կրքերից, որոնք առաջնորդ են դեպի մեղք). Նրա կրածները միայն մարդկային կարիքներ էին։ Հոգին է մարմինը ծառայում են երկու տեսակի կարիքներին՝ այն կարիքներին, որ տանում են դեպի մեղք (պղծություն, պոռնկություն եւ այլն) եւ կարիքներին, որ բնավ դեպի մեղք չեն տանում եւ մեղք չեն, օրինակ՝ ծարավել, հոգեց, քաղցել, տրտմել, որոնք անհրաժեշտ կարիքներ են։ Մարդկային մարմնական եւ հոգեկան կարիքները, որ կրել է Զորատուհն, մեղք չէին, Զորատուհն մեղքի ենթակա չէր, հետեւաբար մեղքից առաջ եկող ապականության եւ ենթակա լինել չէր կարող։

Դիմելով երեութականներին՝ Օձնեցին ասում է, որ «սուտը իրենց համար հույս են դարձրել եւ ստություն են պաշտպանվում» (հմմտ. Եսայի ԻԸ 15)։

Այսպես Օձնեցին Ավետարանի ճշմարտությամբ մերկացնում է հերքում եր աղանդավորների թյուր ըմբռնումները եւ ապացուցում Հայ Եկեղեցու դավանանքի ճշմարտացիությունը։

Նրա օրինակը սովորեցնում է սեփական ճշմարիտ դավանանքի ճանաչմամբ պայքարել այն խաթարողների դեմ, թույլ չտալ դրա աղավաղումը։ Անտեղյակությունն աղանդավորական քարոզների թափանցման նպաստավոր պայման է, իսկ նախկաջ պակասության ճանաչումը, սուրբ հայրերի օրինակի կիրառումը պատճեն են ստեղծում դրա դեմ։

Ստորին ԱԿԵՏՈՍԱՆ

ԼԵԶՎԱՍԻԱԼՆԵՐԻ ՈՒ ԺԱՐԳՈՒՆԻ ՄԱՍԻՆ,

որոնք աղավաղում են մայրենին, սղանում բարեկիր լեզուն, խանգարում հաղորդակցվելուն

Աշխարհի տարբեր հորիզոններում հայերենի ուսումնասիրությանը զբաղվում են երեւելի գիտնականներ, հայագիտական կենտրոններ եւ ամբիոններ։ Ֆրանսիացի գիտնական Ֆրեդերիկ Ֆեյրին, որը հրաշալի խոսում էր հայերեն, հայերենի մասին գրել է. «Հայոց լեզուն է իմ սիրուս առարկան...» Մի լեզու, որ զորություն ունի ազատորեն եւ ստույգ արտահայտելու գիտական խստորոշ միտքը, փիլիսոփայական զարգացումները եւ բանաստեղծական նորին, բազմերանգ կիսատվերները միաժամանակ։

Եթե հայոց լեզուն այսպես կարող են գնահատել ու մեծարել ուրիշ ազգություններին պատկանող անհատներ, ում համար այդ լեզուն օտար է, ապա որքան ավելի մեք պիտի կարողանանք գնահատել, երբ այդ լեզուն մեր հարազատն է, մայրենին, միակն ու անկոտրակալելին։

Բայց, աղա՛ղ, մեր երիտասարդների ընդհանուր խոսակցական լեզվի մեջ իրենց ուրույն տեղն ունեն ծարրոսային բառերն ու դարձվածքները (տե՛ս Հայկվերդյան Լ., Զորյանը լեզվի մասին, Երեւան, 1986 թ.)։

Օրինակ՝ «կալֆ անելը» չգիտես ինչ անիմալի բավիղներով եկել ու բույն է դրել մեր ուսանողական ծարրոնում։ «Կայֆն» արաբերենից վարդոք ի վեր մեր լեզվին անցած «բեֆ» բառն է, որն ունի մեր բանի իմաստ՝ խնջույք, կերուխուս, համոզք, վայելք, ցանկություն։ Կարծես այդքան իմաստները բավական չեն, երիտասարդները բռնել են «կալֆի» պոչից։ Իսկ որտեղից՝ հայտնվեց այդ չարաբաստիկ «կալֆը»։ Ուղղակի արաբերենից, ուր այդ բառն այդպես էլ ինչու է եւ Նշանակում է ոչ այլ ինչ, քան ուրախություն, լավ տրամադրություն։ Բայց չէ՞ որ «բեֆը» նույն առումներն ունի։ Եվ ինչու՞ է «կալֆ» անկոչ հյուրի պես եկել, դարձել ուղղորդական-ուսանողական ծարրոնի պարտադիր «զարդարանք»։ Եվ հիմա բոլոր պատանիներն ու աղջիկները «կալֆ են բռնում», իսկ Նա, ով «կալֆ չի բռնում» կամ իմաստը չի հասկանում, դիտվում է որպես կյանքից հեռ մնացած, կարեցնացելի արժանի...

Սակայն չափի կարծե՛ք, թե մեր լեզուն աղավաղում են միայն օտարամուտ բառերը։ Ձեռնախեման են ենթարկվում նաեւ մեր՝ մայրենի լեզվի բառերը։ Ունեցք մի հստակ ու արտոճավոր բառ՝ «իսկապես»-ը։ Բայց չգիտես ինչու, մեր երիտասարդներն այդ բառի փոխարեն ասում են «իսկականից» եւ էլ ավելի հրեշավորը՝ «իսկականուց»։ Չես էլ հասկանում, թե որտեղից-որտեղ, ինչ տրամաբանությամբ, որ առավելության իրավունքով այդ խեղված բառը մտել է ուսանողության եւ ոչ միայն նրանց լեզվի մեջ ու գրավել «իսկապես», «ճշմարիտ» բառերի տեղը։

Թե ինչպես են խոսակցական լեզվի մեջ մտել «սուտ»-«ստից» զուգահեռ ձեւերը եւ առաջին գործածումից հետո տարածվել համաճարակի պես, ինչպես ռաբիա կոչվող երգերն են տարածվում՝ ավերելով ճշմարիտ մշակույթը։ Ու սա դեռ քիչ է, ամենուրեք կարող ենք լսել՝ «ստից կին», «ստից մարդ»,

«ստից է խոսում»... «Ստից» բառն ունի իր հակադրությունը (իսկանիշը)՝ «իսկականից»-ը, այն էլ այնպիսի անմիտ-անտեղի կիրառություններով, որ մտում ես ապշած։ «Իսկականից եմ ասում, իսկականից գնացիք, իսկականից կերանք, իսկականից կալֆ բռնեցիք...»։ Ա՛յ քեզ բան...

Ճիշտ է՝ ծարրոն տարածված է երիտասարդության մեջ, բայց այդպես խոսում են նաեւ հասուն մարդիկ։ Երբեմն կարող եք հանդիպել «դիպլոմավոր» երիտասարդի, որը դժգոհ է ընկերոջից. «Արա, ի՛նչ ես ֆըռըց-տում», այսինքն՝ ուզում է ասել՝ ի՛նչ ես պղն խաղացնում կամ նման մի բան, բայց գերադասում է «ֆըռըցնել»։ Կամ տղաներով զուգույն են, մեկը պատմում է, թե ինչ փորձանք է եկել իր գլխին։ «Դե ասա՛՛ք քաշվել ես, էլի», - ամոհմանք է գրուցակիցը։ «Հա՛, քաշվեց, իսկականից՝ քաշվեց»,- համաձայնում է ընկերը՝ իր միակ անձի մասին խոսելով առկայա-նա հոգևակի թվով։ Կամ էլ՝ «Պաքցել ես այսինչ կամ այսինչ տեղը», - հարցնում է մեկը։ «Փսիկ կիններ, որ գնալի»,- պատասխանում է մյուսը, եւ դրա իմաստն այն է, թե «ծիծաղելի կիններ, որ գնալի»։ Այդ չարաբաստիկ «փսիկին» ուրիշ իմաստ էլ ունի ծարրոնում, դա Նշանակում է նաեւ ջղայնացած մարդ՝ «Չէ՛, գործ չունես, արա՛, եռի փսիսն ա»։ Շատ են հանդիպում նաեւ օտար բառերի խեղաթյուրումն էլ ավելի հրեշավոր նմուշներ՝ «տոշ-կա բռնել» կամ «տոշվել», ասել է թե՛ սեւեռվել, կենտրոնանալ մի առարկայի վրա։ Կամ «Անգլիություն մի անի»՝ հասկանցելու համար, թե՛ «Հանգ մի հանի»։ Մկրտումայի բառապաշարում գոյություն ունի «մանթաժ» բառը, որը բնորոշում է պարտուղ մարդկի շփոթված, հուսահատ միջնակ։ «Մանթաժ ա ընկել» (տե՛ս Հայկվերդյան Լ., Զորյանը լեզվի մասին, Երեւան, 1986 թ.)...

Չպետք է մոռանալ, որ մարդու բարեկրությունն առաջին հատկանիշը խոսքի մշակույթին տրիպետելն է։ Ճիշտ է եւ արդու-անկրեւ, երբ մարդ մտքերն արտահայտում է հակիրճ, գեղեցիկ եւ լսողների համար հասկանալի ու պարզ ձեւով։ Անհիմն ու չարաբազանված օտարամուտությունը լեզվի հարցում Նույնպես անկուրապակասություն է։

Անհրաժեշտ է խոսել մաքուր հայերենով։ Եթե շրջապատի հեղափոխ թեյադուրանքով ու բերուկով խոսում եք այլ լեզվով, ապա Նույնպես անհրաժեշտ է պահպանել այդ լեզվի անսաղարտությունը։ Ձաղցրավեղու լիկել, բայց ոչ կեղծավոր ու ստորաքաղը։ Դրանք մարդու ամենաբացասական հատկանիշներն են։ Անհրաժեշտ է հեռու մնալ նաեւ գոտեկաբանությունից եւ կեղծ բարձրաշխարհի ճոռոճաբանությունից, ինչպես նաեւ սարքովի, հնարած հայերեն բառերից, օրինակ՝ «գրգռածեղ», «երկարախմորաճան» եւ այլն։

Ամենից գեղեցիկը պարզ ու լակոնիկ խոսքն է։

Ստանան ՂԱԶՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու
«Բնութիկալի» ներածություն
մենագրությունից

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի երեկո Թբիլիսիի Հռոմեական Կաթողիկ եկեղեցում

Մարտի 7-ին, Հռոմեական-Կաթողիկ եկեղեցու անդրկովկասյան վարչության Թբիլիսիի Սբ Պողոս-Պետրոս մայր տաճարում, Հայ Առաքելական Սբ Եկեղեցու Վրիստայր թեմի հետ համատեղ կայացավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի երեկո։

Տեղումական արդյոքից հետո Անդրկովկասի Հռոմեական-Կաթողիկ եկեղեցու առաջնական վարչության առաջնորդ Ջուզեպպե արք. Պազուտտոն, ողբունելով ներկաներին, խոսեց օրվա խորհրդի մասին՝ հիշատակելով դարակազրին հայ ժողովրդի, այնուհետեւ իրենների նկատմամբ իրականացված եղեռնագործությունը, դատապարտեց մարդկության դեմ սանձազերծված ցեղասպանության ամեն տեսակի դրսևորում։

Այնուհետև կատարվեց հոգեհանգստյան կարգ եւ արդթ բարձրացվեց Օսմանյան Թուրքիայի կողմից կրեւտյայն Հայաստանում իրականացված ցեղասպանության նահատակների հոգիների խաղաղության համար։

Վրաստանի հայ մտավորականների միության նախագահի՝ պատմաբան Յուր Թադեո-



սյանը հանդես եկավ Հայոց եղեռնի մասին ընդարձակ բանախոսությամբ։ Իր ստեղծագործություններն ընթերցեց բանաստեղծուհի Մա-

րիա Մոստեւով-Վրիսկոյանը։

Վրիստայր թեմի առաջնորդ Վազգեն եպս Սիդախանյանն իր խոսքում կարեւորեց այն, որ հայ ժողովուրդը ցեղասպանության հետեւանքով թեեւ հայրենազրկվեց, բայց ունեցավ նաեւ իր հերոսամարտերն ու հերոսները, ովքեր պայքարեցին ժողովրդի փրկության համար, երախտից խոսքեր ուղղեց այն ժողովուրդներին եւ երկրներին, ովքեր կիսում են հայոց փշիշը, ովքեր ընդունել ու ապաստանել են մազապաղծ փրկված հայությանը։ Թեմակալ առաջնորդը շնորհակալություն հայտնեց Անդրկովկասի Հռոմեական-Կաթողիկ եկեղեցու առաջնորդին՝ Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակի երեկոն կազմակերպելու եւ հյուրընկալելու համար։

Հիշատակի երեկոյին ինչեցին հայկական, իտալական եւ վրացական հոգեդուր երգեր՝ Հռոմեական-Կաթողիկ եւ Վրիստայր թեմի եկեղեցական եղգախմբերի կատարումներով։

Նահատակների հիշատակի ոգեկոչման երեկոյեր կանգնացվել նաեւ մյուս քույր եկեղեցիներում։

Եռույր եկեղեցու քալում հավաքված հավաքացյալները դիտեցին նաեւ նարիամուտքում կազմակերպված՝ Մեծ եղեռնի մասին պատմող լուսանկարների ցուցադրությունը։

Լրատվական կայքերի՝ ՄԱՅՐ ԱՌՈՒ ՄԻՐԻ ԷՏՄԻՆԵՐԻ ՏԵԽՆԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՆՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՎՈՅԸ

ՊԱՇԷ

Սկիզբը՝ էջ 6

Կիսկրեղի խոսելը նաեւ հոգեւոր առաջնորդի դերի մասին:

- Հոգեւոր հայրն ինքը պետք է նշանակի պահեցողության ձեւը: Ողջ Սուրբ Գիրքը խոսում է հոգեւոր առաջնորդի դերի կարեւորության մասին: Նրանք, ովքեր առաջնորդի կարիք չեն գտնում, սովորաբար կարծում են, թե իրենց փրկությունն իրենց ձեռքում է, բայց հոգեւոր կյանքում, ճիշտ է՝ ոչ նյութական կերպով տեսանելի, փորձությունները հաճախ շատ ավելի բարդ են: Հոգեւոր հայրը մեկն է, ով արդեն անցել է այդ ճանապարհը, մեկը, ում կարիքն ունենք բոլորը: Առաջնորդ ունենալը նաեւ հզոր միջոց է՝ խոսարհություն, հնազանդություն ձեռք բերելու, քանի որ մենք հաճախ տեսնում ենք Աստծո երեսակայական մի կերպար, որ համապատասխանում է մեր բոլոր ցանկություններին, իսկ հոգեւոր առաջնորդը մեզ «արթնացնում է այդ երազներից», ցույց տալիս, թե իրականում Աստված ինչ է ասում և ինչ է ուզում:

Ձեր խորհուրդը, մարդասերը պահեցողության մեջ գտնվողներին:

- Թեեւ շեշտադրվում է ուսելիքի հետ կապված պահեցողությունը, բայց պահեցի իմաստը ժուժկությունն է, չափավորությունը: Ուստի՝ նախ եւ առաջ պետք է սրանց հետեւել: Պետք է ուշադրություն դարձնել լեզվի մաքրությանը, շնալի խոսարհություն ձեռք բերել: Կարեւոր է նաեւ հոգեւոր գրականություն ընթերցել՝ Աստվածաշունչ, «Նարեկ», Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանվիմ» աղոթքը, հայրերի խրատները եւ այլն:

Սբ Գրիգոր Նյսեբերանը մարդու՝ երեք վիճակի մասին է խոսում, որ դեպքում



մարդիկ Աստծու կամքը կատարում են, քանի որ վախենում են, որ Նա կատարի. սա ստրկական վիճակն է: Երբ կատարում են, որպեսզի վարձ ստանան իրենց արածի համար, վարձկանների վիճակն է, եւ երրորդը՝ Աստծու կամքն են կատարում, որովհետեւ սիրում են Նրան. սա որդիության վիճակն է:

Մաղթում եմ, որ պահեցողությամբ Տի-

րոջը հանդիպել ցանկացողները, Ոսկեբերան հայրապետի նշած կարգավիճակներից որում էլ լինեն, Զրիստոս Աստծո զորակցությամբ հաղթահարեն պահեցի շրջանի եւ ողջ կյանքի բոլոր փորձությունները, Սուրբ Հոգու օգնությամբ հոգով աճեն եւ որպես որդի՝ հարուցյալ եւ խորհրդավոր, ներկայանան Ամենակալ Հորը. ամեն:

Քլայվ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ 2014 թ. թիվ 3-6, 8-21, 2-3-24, 2015 թ. թիվ 1-3

Բրիտանացի հանրահայտ գրող Քլայվ Լուիսի վերոհիշյալ գործը քրիստոնեական թեմաներով երգիծական մի ստեղծագործություն է, որ ներկայացնում է հասնակիչ կոչվող դեռի նամակները Նրա զարմիկ Օշինդրին: «Հասնակիչի նամակները» ստեղծագործությունը՝ որպես առանձին գիրք, առաջին անգամ իրատարակվել է 1942 թվականին:

28

Իմ սիրելի Օշինդրի, Երբ ես խնդրեցի նամակներդ չլցնել պատերազմի մասին աղբյուր, ես անշուշտ նկատի ունեցի, որ ցանկություն չունեն մարդկանց մահվան եւ քաղաքների ավերման մասին քո մանկական դատարկաբանությունները լսելու: Իսկ երբ պատերազմը իսկապես առնչվում է ինամարկայից հոգեւոր վիճակի հետ, բնականաբար ցանկանում եմ ստանալ այդ մասին ամբողջական գեղարվեստ: Միևնույն ժամանակում դու հատկապես լուռ ես: Ուրեմն, դու ինձ հիացմունքով պատմում ես, որ կան հիմքեր՝ սպասելու ծանր օդային գործիքն այն բանի համար, որում ապրում է այդ արարածը: Սա ճշգրտորեն օրինակ է նրա, ինչից ես արդեն զոգոհել եմ. դա մարդկային տառապանքից ստացած քո անմիջական հաճույքի մեջ գլխավորը մոռանալու քո պատրաստակամությունն է: Իհնչ է, դու չգիտես, որ ռուսները մարդ են սպանում: Կամ դու չես հասկանում, որ այս պահին մեզ համար բնավ ցանկալի չէ, որ ինամարկայից մեռնի: Նա փախել է իր աշխարհիկ ընկերներից, ում հետ դու ուզում էիր նրան սերտ կապի մեջ պահել: Նա սիրահարվել է մի շատ քրիստոնյա օրիորդի եւ ժամանակակիցորապես պաշտպանվել է իր ժուժկությունից դեմ քո հարձակումներից, եւ այն գանազան եղանակները, որոնցով փորձել ենք նրա հոգեւոր կյանքը փչացնել, միշտ այստեղ անհաջող են եղել: Այժմ, երբ պատերազմն ամբողջական թափ է հավաքում եւ ինամարկայից աշխարհիկ անկախիները համեմատաբար ցածր տեղ են զբաղվում նրա մտքում, որը ինչ է պաշտպանական աշխատանքով, սիրեցյալ օրիոր-

ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

դով, եւ նա ստիպված է էլ ավելի շատ մտածելու մերձավորների մասին, քան երբեք: Նախկինում, եւ դա հավանելու ավելի, քան սպասում էր ինքը, «իր անձը մոռացել է», ինչպես ասում են մարդիկ, եւ օրեցօր ավելի ու ավելի է գիտակցաբար հանձնվում թշնամուն, մենք համարյա վստահարար կորոցներ ենք նրան, եթե նա այսօր սպանվի: Սա այնքան ակնհայտ է, որ ես ամառում եմ դրա մասին գրելուց: Ինձ երբեմն հետաքրքիր է, թե արդյոք դուք՝ երիտասարդ դեռերը, շատ երկար չե՞ք փորձության գործում հանգստի դադարներ վայելում, երբ մարդկանց մեջ աշխատե-

ու միայն արտիներն արշալակներ կատարելու գերազանց ժամանակաշրջան են մեզ համար: Հասկանում ես, այս արարածների համար շատ դժվար է հարատևել: Սովորական դարձած նեղությունները, երիտասարդության սերունդի եւ հույսերի աստիճանական մարումը, ընդհանրապես փորձությունները (որոնցով մենք շարունակ պարտության ենք մատնել նրանց) երբեք հաղթահարելուց լուռ հուսահատվելը (ինչն անգամ ցավի տեսքով չի արտահայտվում), նրանց կյանքում մեր ստեղծած գորշությունը եւ մեր սովորեցրած պատասխանը

շատ արդյունավետորեն է նրանց պաշտպանել մեկ այլ վայրում՝ «սեփական տանը գալու» վտանգից: Ահա այդ պատճառով էլ մենք հաճախ պետք է երկար կյանք մաղթենք մեր ինամարկայիներին. յոթնասուն տարին շատ երկար ժամանակ չէ նրանց հոգիները երկնքից պոկելու եւ երկրին ամրապես կապելու դժվարին աշխատանքի համար: Քանի դեռ նրանք երիտասարդ են, մենք նրանց միշտ տեսնում ենք հաբախված վիճակում: Նույնիսկ եթե մենք ջանում ենք նրանց անտեղյակ պահել կրոնի մանրամասներին, երեսակայության, երաժշտության ու բանաստեղծության անհաշվելի քամիները՝ պարզապես մի օրիորդի դեմք, ինչ-որ թռչնակի երգ կամ հորիզոնի տեսարանը, մեր ամբողջ աշխատանքը միշտ ըջուռ-տառում են: Նրանք ջանասիրաբար չեն կիրառի աշխարհային անաշխատանք, խելամուտ կապերը եւ, նախենալով, անվտանգության ռազմավարությունը: Այնքան մեծ է երկնքի հանդեպ նրանց ախորժակը, որ այս փուլում երկրին նրանց կապելու մեր լավագույն միջոցը նրանց հավատացնելն է, թե ապագայում ինչ-որ ժամանակ երկիրը կարող է երկնքի վերածվել քաղաքականության կամ եզգեցիկի, կամ «գիտության», կամ հոգեբանության, կամ չգիտենք ուրիշ էլ ինչի շնորհիվ: Իսկական աշխարհասիրությունը ժամանակի աշխատանքի արդյունք է՝ անշուշտ հպարտության օգնությամբ, եւ որովհետեւ մենք նրանց սովորեցնում ենք իրենց դանդաղ մահը որակել որպես խելամուտություն կամ հասունություն, կամ փորձառություն: «Փորձառություն»-ը, ի դեպ, այն իմաստով, որը մենք սովորեցնում ենք վերաճել դրան, ամենաօգտակար բանն է: Մի մեծ փիլիսոփա մարդ համարյա բացահայտում էր մեր գաղտնիքը, երբ ասաց, որ երբ խոսքը վերաբերում է առաջնություններին, «փորձառությունը մոլորության մայրն է» (էմանուել Կանտ, «Մաքուր բանականության քննադատությունը», գիրք Ա, մաս 2, 2.2.1. «Պարզապես մի մասին ընդհանրապես»): Բայց շնորհիվ նրա՞նք ենք մենք փոփոխության եւ ինքնակենսական աշխարհում,



յով՝ նրանց զգացմունքներից ու արժեքներից վարակվելու որոնք էրանք: Նրանք անշուշտ սովոր են մահը գլխավոր չարիք եւ կենդանի մնալը՝ մեծագույն բարիք համարելու: Բայց դրա պատճառն այն է, որ մենք ենք այդպես սովորեցրել նրանց: Այնպես մի՞ արեք, որ մենք մեր իսկ քաղաքացիությանը վարակվենք: Գիտենք, տարօրինակ է թվում, որ քո գլխավոր նպատակն այս պահին պիտի լինի՝ հենց այն, ինչի համար ինամարկայից սիրեցյալն ու մայրն արդթում են, այսինքն՝ նրա մարմնի անվտանգությունը: Բայց այդպես պիտի լինի. դու պիտի պահպանես նրան աշխարհիկ պահ: Եթե նա այժմ մեռնի, դու կկորցնես նրան: Իսկ եթե նա վերապրի պատերազմը, միշտ հույս կլինի մեզ համար: Թշնամի նրան պաշտպանել է քեզին փորձությունների առաջին փուլից մեջ, բայց, եթե նա ողջ մնա, դու ժամանակը որպես քո դաշնակից կունենաս: Միջին տարիքի բարեկեցության կամ դժվարությունների երկար, ծանձրալի

տեսանկյունի՝ մենք նրա գիրքը խիստ անվստահ ենք դարձրել: Թե որքան արժեքավոր է ժամանակը մեզ համար, կարելի է հասկանալ այն փաստից, որ թշնամին մեզ դրակից շատ քիչ է թողլ տալիս: Մարդկային ցեղի մեծամասնությունը մանուկ տարիքում է մահանում, իսկ ապրողների մի մեծ քանակությունը մեռնում է երիտասարդ տարիքում: Պարզ երեւում է, որ Նրա համար մարդու ծնունդը կարեւոր է հիմնականում որպես մարդու մահվան որակի որոշիչ, իսկ մահը՝ միայն որպես դեպի այդ մյուս տեսակի կյանք տանող դուռ: Ուստի մեզ թույլ է տրված աշխատել միայն մարդկային ցեղի ընտրված փոքրամասնության հետ, որովհետեւ այն, ինչ մարդիկ «սովորական կյանք» են կոչում, բացառությունն է: Հավանաբար թշնամին ցանկանում է, որ մարդ կենդանի միայն մի ասպը (բայց շատ փոքր մասը), որով Նա բնակեցնում է երկնքը, մեզ դիմակայելու փորձառությունն ունենա վաթսուամյա կամ յոթնասուամյա երկարյին կյանքի ընթացքում: Ուրեմն այս միջապայում են մեր ինամարկությունները, որոնք որքան ավելի փոքր են, այնքան ավելի լավ պիտի գործածենք դրանք: Ինչ էլ որ անելու լինես, հարապրությանը սահմաններում ապահովիր ինամարկայից անվտանգությունը:

Եւ սիրառատ բերի՝
ԽԱՌՆԱԿՉ
Շարունակելի
Մեղեդիների թարգմանությունը՝
Ս. Ս.-ի

ԲՐԻՍՏՈՆԵԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրթական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Երիտասարդ Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստիգիստ Աստուրյան

Գրականության վարչական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web.kypj.kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Մոտր. տպագր. 18.3.2015 թ.
Տպագրական՝ 2100
Գինը՝ 50 դրամ